



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lkn

110

1999, 1" 

Խ Ն Դ Ի Բ

Կ Ա թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ո Ի Թ Ե Ա Ն

Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց

3460

Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

1836Ի

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Բ Ո Ի Թ Ե Ա Ն

(Պ ա շ ա ժ Է լ ի ա յ Ի)

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Ց

Կ Ա Բ Գ Ե Ի Կ Ա Ն Ո Ն

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Ց

Կ Ա թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Կ Ա Ն

Ի Շ Խ Ա Ն Ո Ի Թ Ե Ա Ն

1017

Ի Լ Ո Ց Ս Ա Յ Ո Ղ
Մ. Ա. Ա. Ա. Բ. Գ. Ե. Ա. Ն.



1910

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԱՅԱՆ ԵՐԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԱՅԱՆ ԵՐԱՅԱՆ

(Կոնստանդուպոլիս)

Կ. ՊՈԼԻՍ — ՅԱՐԵՎԱՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԵՐԱՅԱՆ ԵՐԱՅԱՆ

ԵՐԱՅԱՆ ԵՐԱՅԱՆ

ԵՐԱՅԱՆ ԵՐԱՅԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

Կ. ՊՈԼԻՍ

ԵՐԱՅԱՆ ԵՐԱՅԱՆ

ԵՐԱՅԱՆ

28. 115

9110-60

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԶՅԻԱԿՆԵՐՈՒՆ

Սկիզբն ամենայն գոյութեանց՝ Աստուած. սկիզբն ամենայն բարեաց՝ սէր. սկիզբն ամենայն շնորհաց խոհականութիւն:

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕՐՐԷԼԵԱՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ այն զաւակները, որոնց սրտերումն ազգային զգացմունքը սաստիկ ու սէրն էլ եռ է զալի, ի հարկէ հաւատ էլ ունին, որ հայոց այսօրուայ գոյութիւնն աշխարհիս վրայ՝ պատմութեան մի սրանչեւիքն է, այս զգացողութեամբ, այս սէրով և այս հաւատով է անշուշտ, որ իրանց ճիգն են թափում, ջանքն են տնում ազգաշինութեան մեծ գործին մէջ: Խնդրում եմ խոհարհութեամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ այս ազգաշէն զաւակներէն, որ Հայոց ազգայնութեան բարոյական և մտաւորական կազմութեան գործաւոր լինելէն յառաջ, Ստեփաննոս Օրբէլեան (1) իմաստասէր պատմաբանի այս ուղիղ և ազդու խօսքերն իրանց սրտերումը դրօշմեն թէ «Սկիզբն ամենայն գոյութեանց՝ Աստուած: Սկիզբն ամենայն բարեաց սէր: Սկիզբն ամենայն շնորհաց խոհականութիւն»: Մեր իմաստուն պատմաբանն այդ խօսքերէն աւելի զօրաւոր, աւելի ներգործուն պատւիրանք չէր կարող մեզ աւանդել: Հարիւրաւոր տարիներէն յետոյ թող կենդանանան զգայուն ազգայնոց սրտերումն այս վրասեմ խօսքերն և ահա այսօր էլ առիթը մեր յառաջ է զալի իրօրէն արգիւնաւորել մեր մէջ մեր նախնի իմաստունին խօսքերը: Այսօր այն ժամանակին ենք հասել, որ Հայոց բարոյական ընկերականութիւնը վտանգի մէջ է գտնւում. թէ որ հաւատում ենք,

(1) Ստեփաննոս Օրբէլեան, Արքեպիսկոպոս Սիւնեաց. Պատմութիւն Սիւնեաց աշխարհին:

որ Հայոց բարոյական ընկերականութիւնն իրանց համար մի ամենամեծ բարիք է, անսպառնաւ և մի ամենամեծ սէր պէտք է ունենանք մենք մեր այդ բարոյական ընկերականութեան վրայ. վասն զի ազգային բարոյական սէրով կարող ենք և վայելել ազգային բարոյական բարիք. ազգային բարոյական սէր զգալը մի առանձին շնորհք է Աստուծմէ մարդու համար, ամեն շնորհք էլ թէ բարոյական և թէ մտաւոր խոհականութեամբ կատարուի. ուրեմն ամենէն յառաջ խոհականութիւն պէտք է ունենանք ազգաշինութեան շնորհն էլ մեզ բնաւորելու համար: Այն, մեր այսօրուայ ազգի գոյութեան պատճառ միմիայն ինքն Աստուածն է. թէ որ բարի կը կամենանք մենք մեր Հայոց ազգային և բարոյական ընկերականութեան համար, սէր՝ մեծ սէր պէտք է զգանք նրա վրայ: Թէ որ մեր ազգային և բարոյական ընկերականութիւնն էլ վերակազմելու շնորհքն էլ կամենում ենք ունենալ: Այնք է որ խոհականութեամբ շարժինք. խոհականութիւնն էլ մարդս գիտակցութեամբ ձեռք կրերէ: Առանց ուղիղ գիտութեան խոհականութիւն չկայ:

Գուրս առնելով Սկեպտիկեան, Գողմոպօլիտ և օտարներու անունով սնուած ազգայինները, ուղղում եմ իմ խօսքը, բուն հայկական ժողովրդեան մէջ ծնած, հայկական կեանքով ապրած հայկական սնունդով սնուած Հայոց, կամ թէ մեր ազգային և բարոյական ընկերականութեան պատկանող Հայոց, թէ այսօր մեծ խնդիրը մեր Հայոց բարոյական ընկերականութեան վրայ է և ոչ մեր քաղաքային կամ ազգային ընկերականութեան: Միտ գնելու է, որ այսօր Հայոց բարոյական, ազգային և քաղաքային կեանքը կամ ընկերականութիւնը շատ զգալի կերպով տարրերում է իրարմէ այն ամեն տեղ ուր Հայոց ժողովրդէն զտնուում է: Առսխայում Հայոց ժողովուրդը մի միայն բարոյական կեանք կամ ընկերականութիւն ունի իրա համար առանձին. քաղաքայինն ու ազգայինը տեղական և տէրութեանական օրէնքով ուստականն է: Թուրքիայումը բարոյականին հետ ունի և ազգային, քաղաքայինը ծնում է կամ ծնուելու վրայ է, միւս բոլոր ազգերու քաղաքայինովը: Պարսկաստանում, ինչպէս նաև բուն Թուրքաստանումը, բարոյականն էլ է ճնշուած, միայն

Հնդկաստանումն է, որ ամեն մասնով բարոյական ընկերակա-
նութիւն կ'աւելիէն Հայք, որով գերազանցում են և ազգայինով .
բայց քաղաքայինը տեղական է :

Մեր Հայոց ընկերականութեան այս այլևայլ կերպարանը-
ները շատ ազգայնոց շփոթում են այսօր . չենք կարողանում
որոշել իրարմէ մեր քաղաքային, ազգային և բարոյական կեր-
պարանքները : Օրինակի համար, այսօր Քուրբխայում Հայոցմէ
ամանց համար, Հայոց ընկերականութիւնը թէ՛ ազգային է և
թէ՛ բարոյական . ազգային է՝ պատական, բողոքական և յունա-
կան Հայոց հետ . ազգային և բարոյական միայն բուն Հայոց
հետ : Բայց այս ընկերականութեան կերպարանքն իրօրէն ըն-
դունում չէ Օսմանեան տէրութենէն, այլ ամանց համար տեսա-
կան է՝ շփոթ դրութեանց վրայ հեմնում : Ռուսիայում Հայոց
ընկերականութիւնը միայն բարոյական է, այս բարոյական ըն-
կերականութիւնն էլ ենշում է ամեն կողմէն ռուսական ազ-
գային, բարոյական և քաղաքային տարերքներէն : Ենչպէս
Քուրբխայում մի Հայ կամ ուրիշ քրիստոնէայ մարդ փոխում
է իր բարոյական կեանքը իսլամութեան հետ, դադարում է պատ-
կանելէ իր ընկերականութեան թէ՛ ազգայնօրէն և թէ՛ բարոյա-
պէս . նոյնպէս և Ռուսիայում մի Հայ կամ Քուրբ մարդ, որ իր
բարոյական կեանքը փոխեց ռուսականին հետ, էլ բոլորովին
դադարեց պատկանելէ՝ իր ազգային կամ բարոյական ընկերա-
կանութեան, Պարսկաստանումը ոչ թէ՛ միայն Հայ մարդ, այլ
որ և է աշխարհի մարդ բոլորովին կորցնում է իր նախնական
կերպարանքը : Թէ՛ և բողոքական տէրութեանց մէջ եզոզ Հայք
ինչպէս են պահում իրանց ազգային բարոյական և քաղաքային
ընկերականութեան կերպարանքներն՝ արդէն մերայնոց շա-
տերուն յայտնի է : (1)

Ուրեմն այսօր մեր Հայոց ընկերականութիւնը ազգային լի-
նելէ յառաջ է մի միայն բարոյական, որովհետև իր գլխաւոր
տարերքն է հոգևոր բան . եկեղեցի, որ մեզ տալիս է Աւետա-

(1) Տես Կոռնկ Հայոց աշխարհի հանդիսի 1861 թուի Ը. թուին մէջ « Մը-
սածմունք Հայոց ազգային և բարոյական զարգացման վրայ » յօդուածը :

բանի լայնք, սատուածային օրէնքը. իր առաքելականութեամբը պահած է իր մէջ և մեր նախնական ազգայնութեան տարերբը, այն է մեր ազգային պատմութիւնը, մեր հոգևոր աւանդութիւնքը, մեր Նկեղեցւոյ կարգերն ու կանոնները, մեր սրբապատմանց ծեսերն ու արարողութիւնքը, մեր սրբազան և աշխարհիկ լեզուները, գպրութիւնք և գրականութիւն, մի խօսքով Հայաստանեայց սուրբ և առաքելական Նկեղեցւոյ ինքնագոյութիւնը:

Ուստի, այսօր Հայոց ընկերականութեան հոգին ու կեանքն է՝ իր Նկեղեցին իր կամողիկոսական իշխանութեան անկախութեամբը. արդ՛ ո՛վ որ կգաչի նրա կեանքին, է՛վ որ կուզէ սպանանել նրան՝ ոգին թէ և մեր արիւնէն լինի, մեր եզրայրը, ինչպէս են մեր սրբական, բողոքական և ուրիշ այլադաւան ազգայինք, թէ և լինի այդ մեր կեանքը փշայնողն ու հոգին սպանողը, մի հզօր տէրութիւն, ինչպէս է Ռուսաց կայսրութիւնը, մեր ամենամեծ թշնամին կեանաչենք նրանց և կսրաշտպանենք մենք մեր կեանքն ու հոգին մինչ մեր վերջին արեան կամ իլը: Այս առաջին անգամ չէ, որ մեր բարոյական կեանքը տազնապումն է գրանւում, քանի տնգամ որ սրա օրինակը մեր պատմութեան մէջ տեսել ենք, այնքան անգամ էլ երևել է դարձելը մեր պապերու սրտերումը Սատուածային ձայնի, որ նրանց հոգւոյն զօրութիւն և խելքին տժ է տուել: Նրբ մեր պապերը քաղաքային ընկերականութեան գոյութիւնը կորցրել են, բարոյականին մէջն են եղել ասրաստան, բայց երբ այդ բարոյական գոյութիւնն էլ եղել է վտանգումը, Սատուծոյ են միայն ապաւինել, Սատուած է եղել միայն մեր գոյութեան ազատիչը. ինչպէս կասէ մեր Հայաստանեայց եղեղեցւոյ ամենամեծ սուրբ Ամողիկոսաներէն մէկը⁽¹⁾.

« Այլ եմք իբրև զայժեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք ի քարանձաւս յայս բնակելով՝ յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատայեալք ի գիւզից կամ յազարակաց, յորոց ունիմք և ոչ մի: Նաև ոչ անգաստան հողոյ զի վաստակօք և աշխատութեամբ զպէաս մեր ընուար և ոչ օգնութիւն ուստէք որպէս արժան էր ի թագաւորաց և յիշխանաց ի Քրիստոս հա-

(1) Ներսէս Շնորհալի:

ւատացել լոց . այլ միայն ի Տեառնէ Աստուծոյ , և այլն . . . :

Այս մեր պատմական հանգամանքը Հայաստանեայց եկեղեցւոյ ամեն զաւակներուն ծանօթ պէտք է լինի, որոնք իրանց և իրանց ազգին կեանաչէն: Ասիայում քաղաքային կեանքը երբէք գերազանց չէ եղել բարոյական կեանքէն, հոգևոր կեանքը շատ տարբեր է եղել մարմնաւորէն քրիստոնէութեան ժամանակ, ինչպէս նաև մինչև այսօր: Ասիոյ քրիստոնէայ ժողովուրդներէն ամենէն աւելի Հայոց ժողովուրդն է զգացել այս բանը, և քանի անգամ որ իր ջանքն արել է այս կեանքը վայելելու՝ յաջողել է. բայց ժամանակը նրա վրայ մարմնաւորն է բերել, հենց այս մարմնաւոր կեանքումն է որ շատ անգամ մոլորուել է կամ մոռացել է բարի բան գործելու. բարի բան գործելու ազգային կամ քաղաքային ընկերականութեան համար, Հայր սէր ունեցել է, բայց միջոցները միշտ իրան սակասել են: Եր մարմնաւոր վայելմունքը հոգևոր շնորհքներէն յառաջ գալով (¹) իր քաղաքային ընկերականութիւնը բոլորովին տարբեր կերպարանքով է եղել իր բնական աշխարհին յարևան եզոզ ազգերու քաղաքային կեանքէն. այս մեծ պատճառ էր եղել միշտ որս լինելու մեր ազգն ու աշխարհը՝ նոյն շնորհքը չունեցող ազգերու ասպատակութեանց և աւազակութեանց:

Անց կացան զնացին ասպատակութեանց և աւազակութեանց ժամանակները . կողոպտեցին, Թալանեցին մեզ ազգային և քաղաքային մարմնաւոր մեծութենէ և ճոխութենէ, բայց նրանց տեղ այսօր խղճի, հոգւոյ, կրօնի և մտքի ազատականութեան ժամանակ տակաւին անեղ որկորներ են բաց արած կանգնած-

(¹) Առաջին եւ գլխաւորն է Հայոց ընտանեկան կեանքը, այս կեանքը վայելելու համար առաջին հարկաւորն է աշխատանք. ամենուն յայնի՛ն որ Հայր ինչ կերպով տուած են եղել իրանց երկրագործութեան եւ վաճառականութեան, որք են աղբիւր նիւթական հարստութեան, այս հանգամանքը ցոյց կտայ, որ ընտանեկան կեանքը Հայոց ազգային գոյութեան մի մեծ տարերքն է եղել. զիտեան ուրեմն լուսաւորութեան մեր նոր վարդապետները թէ որ՞ չափ պարտական ենք Հայաստանեայց եկեղեցւոյն ամուսնութիւն կամ պսակը իրեւ խորհուրդ եկեղեցւոյ պահպանելուն մեր մէջ:

մեր գլխին վրայ կուլ տալու մեր ազգային բարոյական ազատութիւնը . այն է Հայաստանեայց եկեղեցին , պապական կլանող տարերքը թուրքիայում . Ռուսական սպառեցնող զէնքը բուն Հայաստանում : Որո՞ւ ապաւինինք , որո՞ւ գիմենք , միայն Աստուծոյ , հաւատալով որ նա է միայն մեր այսօրուայ գոյութեան պատճառ , միայն այն սիրոյն՝ զիտենալով որ մեզ բարի բան անել կտայ , միայն այն խոհականութեան՝ յուսալով որ մեզ շնորհ կտայ մեզ ճանաչելու , մեզ ճանաչելով՝ մեր թերութիւնը զիտենալու , մեր թերութիւնը զիտենալով՝ մեզ մի դարման անելու . Յամանեան բարեխնամ և բարեգութ Սուլթանի տէրութեան մէջ և հովանաւորութեան տակ :

ՄԱՐԿՈՍ ԱՂԱՔԷԳԵԱՆ

Կ. Պօլիս 1865 հոկտ. 3



Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ո Ա Հ Մ Ա Ն Ա Դ Բ Ո Ի Թ Ե Ա Ն

(Պաշտօնակաշի)

ՌԵՆՈՐ 1836 ԲՈՒԿԻ

Ռուսաց տնտեսական և տնտեսական հասարակական և քաղաքական
վարչության համար, ի Ռուսաստան.

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Կարողիկոսական դիւանի համար)

Երբ փոքր առ փոքր սկսան երեւել Պարսից և Ռուսաց մէջ
պատերազմի նշանները, Տիփսիսու վիճակաւոր առաջնորդ
Ներսէս արքեպիսկոպոսը, իսկոյն քարոզիչներ ուղարկեց
Պարսկաստանի Հայաբնակ գաւառները, որ յորգորեն այն տեղ
բնակուած հայոց ժողովուրդը պատերազմի ժամանակ ներգոր-
ծել Ռուսաց տէրութեան օգտին համար: Այսպիսի հոգևոր
պաշտօնակատարներէն մինն էր երևելի քարոզիչ աւագ քա-
հանայ Տէր Մէլքիսէդէկ Ղամազեանցը, որ իսկ այս նպատակով
Էջմիածին էր ուղարկուած՝ կամելով խափանել Պարսից տէրու-
թեան ազդեցութիւնը Հայոց վրայ: Ներսէս առաջնորդը հա-
մոզեց Եփրէմ կաթողիկոսին ազգի օգտի համար՝ դուրս գալ
Էջմիածնէն և գնալ Հաղբատու վանքը, որն որ պատկանում է
Տիփսիսու վիճակին: Կաթողիկոսը կատարեց այդ պահանջ-
մունքը ու վեր կեցաւ գնաց Հաղբատու, բայց, ինչպէս մենք լը-
սել ենք ականատեսներէ, բաւական չէր նա այն տեղ իր դրու-
թեամբը:

Զրգիտենք զգում էր արդեօք Կաթողիկոսի սիրտը, թէ նրա
ազգը պիտի հանդիպի մեծամեծ թշուառութեանց և կամ թէ
երկբայում էր նա որ Ռուսաց տէրութիւնը չկատարէ իր Ներ-
սէսին տուած խոստումները, այսինքն անկախութիւն տալ
Հայաստանին իւր հովանաւորութեան տակ: Յայտնի է միայն

Թէ արեգարդ ծերունին անդադար անհանգստութեան մէջ էր :
Թնդանօթներու գոռումը, ժողովրդեան շարժումը, ազդ
արին արդէն բոլոր երկրին, Թէ վերջացան հաշտութեան և
խաղաղութեան օրերը : Հայերն իրանց Եկեղեցւոյ հրաւերը
լսելով՝ ուրախ սրտով գնում էին իրանց զինուորական զնդերը
մտնելու : Այս ազգային սպառազինութեան օրերը միևնոյն
ժամանակ խնդութեան և ցնծութեան օրեր էին, այս զուար-
թասիրտ բազմութեան մէջէն դուրս էին գալի հրաշալուր ձայ-
ներ, որոց արձագանքը տարածուում էր Տփլիսիսու զարնանա-
յին օդումը, փրկութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, ազա-
տութիւն, անկախութիւն Հայաստանի : Որքան կեանք զարդե-
ցրին Հայոց ազգի մէջ այս հիացուցիչ ձայները և որքան կեանք
դէպի անդարձ կորուստ մատնեցին : Բայց չեն դադարիլ այդ
հրաշալուր ձայները անցնող սերունդի հետ, ոչ, կատարուե-
լու են նրանք մի օր . կգան, կանցնին սերունդներ մի, երկու,
երեք ճգնութեամբ և մարտիրոսութեամբ, ճակատի բրտինքով
ոռոզելով Հայաստանի հոգևոր երկիրը . բայց ազգի իրաւունքը
դէպի ազատութիւն և անկախութիւն կմնայ միշտ և յաւիտեան :
Մի ազգ, որ ունի իր յիշատակներն անցելումը, հայրենասի-
րութիւն ներկայումը, նա ունի իրաւունք յուսալ սպազա-
յումն իր ազատութիւնն ու անկախութիւնը : Հայրենասիրու-
թիւնը ցնորք չէ, մարդկանցմէ հնարուած բան չէ . նա կարող
է երբեմն խաբէական յոյսեր ունենալ . կարող է և երբեմն
խաբուիլ . կարող է երբեմն նաև մատնուիլ . կարելի է նրան
խանգարել, մոլորել, բայց բոլորովին ոչնչացնել անհնարին
բանէ : Ամեն ազգի մէջ, յուսաւորութեան ամեն աստիճանի մէջ՝
հայրենասիրութիւնը յայտնուում է իբրև մարդու հոգւոյ մի
բնական գորութիւն, որ աճելով խորտակում է բռնակալու-
թեան ուժը : Մի ազգի առանձնութիւնը իր սեփնական իրա-
ւունքն է կեանքի համար, այն իրաւունքը, որ Աստուած բնա-
ւորել է մարդու սրտի մէջ : Հզօր և ազդու զանազանութիւն-
քը, որովք բաժանուում են իրարմէ կլիմաները, տոհմերը,

բարբերը, լեզուները և այլն, միշտ կարող են ընդդիմանալ ազգերու բռնաւորօրէն միաւորութեանը : Ազգերու առանձնութիւնը մարդկութեան օրէնքն է և նրա հոգևոր հարստութիւնն է գոյացընում :

Ազգային 1826 թուին շարժման գլուխն էր Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցին, առաջնորդ Տփլիսու : Նա որ այդ շարժումը գրգռել էր և նրա վարիչն էր, վառուած ոգևորած իբրև սուրբ պարասականութիւն, նրա հայրենասիրութիւնը կարող չեղաւ լեցնել իր պակասութիւնը քաղաքագիտութեան և մարդկանց ճանաչողութեան մէջ : Նա չունէր այն ձիրքը, որ բոլոր պարագաներն իր ազգի օգտի համար գործածէր : Պասկևիչ, Կրասուվսկի զօրապետներու խառնակութեանց մէջ, կարող չեղաւ նա, ոչ մնալ անկախ այդ խառնակութենէն և ոչ ընտրել այն կողմը, որմէ աւելի կարելի էր ազգային օգուտ քաղել : Վատահ եղած գործի յաջողմանը վրայ, գուցէ և քաջալերուած Կրասուվսկիէն և Գրաֆ Բէնկէնդորֆիէն նա մի զիր գրեց Փանդարմներու պետ Գրաֆ Բէնկէնդորֆին, որու մէջ մեղադրում էր Պասկևիչին : Այդ նամակը ներկայացուցին Կայսեր, որ իր վատահութիւնը Պասկևիչին վրայ ցոյց տալու համար նոյն նամակը ուղարկեց նրան և հրամայեց փափկութեամբ վարուիլ Ներսէսի հետ, համարելով նրան Հայոց ազգի վրայ ազդեցութիւն ունեցող անձ : Պասկևիչը ծածկեց իւր թշնամութիւնը Ներսէսի դէմ մինչև Պարսից պատերազմի վերջը, մտքումը պահելով, որ յետոյ ժամ պարապոյ գտած՝ իր վրէժխնդրութիւնը կհանէ Ներսէսէն և նրա ազգէն : Վառվռուն հայրենասէր Ներսէսը ոգևորեց բոլոր ազգը իր ոգևորութեամբ : Ազգի հետ միասին նա դիմում էր ամեն վտանգաւոր զոհողութեանց մէջն միշտ ուռասական առաջնապահ զօրքին մէջ, ամէնաստոյգ տեղեկութիւն էր ստանում Պարսկական զօրքի պատրաստութեանց և շարժողութեանց մասին : Հայոց ազգի ոչ կեանքն էր խնայում և ոչ սաւցուածքը Ռուսաց զէնքի յաջողութեան համար : Բաց էր անում Հայոց շտեմարանները և բոլոր հացը

բաժանում էր այն զօրքին, որ եկել էր Հայաստանն ազատելու : «Ես ինքս լսում էի, կապէր երբեմն ձերունագարդ հովիւը, ժողովրդեան տրտունջը, երբ առնում էի նրամէն հացը՝ սոված ու քաղցած զօրքի համար և գրկում էի իմ ազգայնոց ամենօր-ւայ հացէն : » Բայց մօտեցած յոյսը Հայաստանի փրկութեան և ազատութեան համար ուժ և կարողութիւն էր տալի Ներսէսին և նրա ազգին, որ տանին այդ գրկողութիւնը Ռուսաց յաջողութեան համար : Պատմութիւնը կբացայայտէ ապագայ սերունդին՝ թէ՛ հրքան երախտիք ունի Ներսէս իր ազգի հետ միասին Ռուսաց յաջողութեան մէջ : Այն յոյսը թէ Հայոց երկրին տիրելուց յետոյ, նա պիտի լինի անկախ՝ մխիթարում էր ու քաջալերում էր Ներսէսին և Հայոց ազգին այդ ծանր պարագայի մէջ : Բանի քանի անգամ Ներսէս իր խօսակցութեան մէջ անցելոյն մասին յիշում էր այն թուղթը, որնոր միշտ ծոցումն էր պահում իբրև տէրութենական (տիպլոմատիք) վկայագիր Ռուսաց տէրութենէն Հայաստանի ազատութեան մասին : Յայտնի չէ, ուր մնալը այդ թուղթին : Հաւանական է, որ Սարգիս եպիսկոպոսն Չալալեանց կորզած լինի այն՝ հանգուցեալ Ներսէսի ծոցէն և տուած փոխարքայ Բարեատինակոյն ի նշան իր հաւատարմութեան ի նպատակ Ռուսաց նպատակներուն, որոց մէջ յայտնի են նենգութիւնքը Հայոց Եկեղեցւոյ անկախութեան դէմ : (*)

Վերջապէս ժողովրդեան աղմուկն ու զէնքերու դղրդիւնքը

(*) Պէտք է իմանալ, որ Ներսէս Կաթողիկոսի վախճանելուց յետոյ, փոխարքայ Բարեատինակին՝ ընդէ՛մ սեփականութեան իրաւանց և սահմանադրութեան 32րդ յօդուածին մասնաւորապէս Չալալեանց Սարգիս եպիսկոպոսի միջնորդութեամբ Ներսէսի բոլոր թղթերն ու գրագրութիւնքը յափշտակեց՝ յուսալով նրանց մէջ զլտնել որ և է հետք նրա թղթակցութեան Օսմանեան տէրութեան հետ, որոց մասին կասկածանքի մէջ էր : Բայց բացի իր բարբարոտութենէն ոչ ինչ չգտաւ և երբոր էջմիածնի սինոդը ուղարկեց Վահար եպիսկոպոսն ի Տփլիս, որ ապացուցանէ Սարգսի անիրաւ գործը, փոքր զարմանք չէր սինոդի համար լսել փոխարքայի պատասխանը թէ « Սարգիսը իր հրամանովն է գործել այդ : »

դադարեցան, Հայոց երկիրն ազատուեցաւ Պարսից ձեռնէն և նոյն ժամուն Ներսէս արքեպիսկոպոսը խօսք զցեց իր ազգի իրաւանց մասին, յիշեց տէրութեան խոստմունքը, այն է անկախութիւն շնորհել Հայոց երկրին Ռուսաց կայսեր հովանաւորութեան ներքեւ: Նրա պատասխանն այն եղաւ որ համաձայն կայսեր բարձրագոյն կամացը հրաւիրեցին նրան զնալ Պետերբուրգ կայսեր հետ անձամբ տեսնուելու: Ներսէսը սիրտը յուսով լցուած դուրս եկաւ Տփլիսէն դէպ ի Ռուսիա: Այն ինչ անցել էր նա Գօն գետը՝ նորէն հրաման հասաւ նրան Աքապուսը զնալ Բէասարաբիա և լինել այն տեղ վիճակաւոր առաջնորդ: Տասնուչորս տարի մնաց նա այդ արքայի մէջ և հազիւ 1843 թուին Յովհաննէս Կաթողիկոսի մահուց յետոյ բոլոր ազգի միաբան հաւանութեամբ Կաթողիկոս ընտրուեցաւ: Կայսերական ողորմածութիւնը չվերջացաւ Ներսէսին Բէասարաբիա արքայելով, Պասկևիչի անձնական թշնամութիւնը Ներսէսի դէմ աւելի դէնը տարածեցին նրա հալածանքը, բոլոր իւր թըշնամութիւնը թափեց նա խեղճ զաղթականներու վրայ: Հարիւր հազար հոգի Ռուսաց տէրութեան և իրանց սեփնական հոգևոր հովիւներու հրաւերովն թողեցին իրանց տները, զիւղօրայքը և չուարին Պարսկաստանէն, որ զան ու բնակուին Հայոց երկրումը: Ամիսներ տևեցին, մինչև որ տուն տեղ տուին այդ խեղճերուն: Ամիսներով մնացին նրանք չոր ու ցամաք երկրի վրայ, տօթակէզ լինելով արևու տակ: Հազար հազարներ մեռնում էին այն ժողովրդէն, որ ոչ կեանք էր խնայել և ոչ ստացուածք Ռուսաց զէնքի փառաւորութեան համար, թէ որ մէկ քանիսն ունէին դեռ ևս փոքր ինչ կարողութիւն և զօրութիւն ճանապարհորդութեան, սրտները կոտրուած, կրկին յետ էին դառնում Պարսկաստան: Իսկ տկարները և խեղճերը կարող չլինելով իրանց եղբարց քամակէն զնալ՝ զոհ դարձան Պասկևիչի անգթութեանը: Անա այսպիսի սև երախտագիտութիւն ցոյց տուաւ Ռուսաց տէրութիւնը ինչպէս Ներսէսին, որու օգնութեամբ այնքան յաջողուել էր, նոյնպէս և Հայոց ազգին, որ

յետ չքաշուեցաւ, ոչ մի զոհի առաջն, Ռուսաց զօրքի համար :
« Ծանր մեղք կայ խմհոգւոյս վրայ, ազգիս առջն, կլասէր շատ
անգամ ազգասէր Կաթողիկոսը բացասիրտ խօսած ժամանակը,
այդ մեղքը Հայկազեան գաղթութիւնն է : » Այս խօսքերէն յե-
տոյ, որոնք կարծես թէ նրա հոգւոյն խորեմէն բռնութեամբ
էին դուրս գալի, երկար մնում էր նա զլուխը քաշ արած ան-
մբռունչ ու անշարժ, այսպիսի դրութեան մէջ տեսնելով նրան
կարելի էր միտ բերել ծերունի Պրիամոսին՝ որ ծնկի վրայ
կանդնած խնդրում էր Աքիլլեսէն իր սպանուած որդւոյ Հէկ-
տորի մարմինը. Ներսէս այդ բոպէներումը նամասպէս ծունր
էր իջանում իր ազգի առջն, նամասպէս խնդրում էր նրամէն,
բայց ոչ թէ մարմիններ իր որդւոց՝ որոնք զոհ էին գնացել Պաս-
կեիչի վրէժխնդրութեանը, այլ իր ազգի մեծահոգութեան ար-
տասունքը իրանց դժբաղդ հովուին համար : Անտարակոյս ոչ
ազգի արտասունքը կցամաքին և ոչ վեհանձնութեան զգացմուն-
քը կարակասին մի այնպիսի ոգևորուած հայրենասիրի համար,
ինչպէս էր Ներսէս :

Պասկեիչի թշնամութիւնը չբաւականացաւ այդ զոհերով էլ,
նրան հարկաւոր էր կործանել Հայոց հոգևոր ամբողջը, այսինքն
նրա Եկեղեցւոյ անկախութիւնը և Կաթողիկոսական իշխանու-
թիւնը : Այս նպատակին համար նրա հրամանով Տփիսիսումը
կազմուեցաւ մի յանձնաժողով, որ պէտք էր ուրուագիր պատ-
րաստել Հայաստանեայց եկեղեցւոյ վարչութեան համար :
Յանձնաժողովին տուած յանձնարարական խորհուրդները մենք
կարդացել ենք, բայց բառ առ բառ չունինք մտներումս և կա-
բող ենք միայն նրանց նպատակը բացատրել, որ էր սահմա-
նադրութիւն յօրինել համաձայն նախնի օրինաց և աւանդու-
թեանց Հայաստանեայց եկեղեցւոյն, աչքի առջն ունենալով
սահմանափակել Կաթողիկոսի իշխանութիւնը, սխնդրու կազ-
մել նրա մօտ, որ խափանարար լինի նրա իշխանութեանը,
զրկել Կաթողիկոսին փողի գումարների տեսչութեան իրաւուն-
քէն, այն գումարներն, որոնք Եկեղեցեաց և Էջմիածնայ գոյքն

են. ստորադրել Ռուսաց տէրութեան, նուազեցնել Հայաստանեայց եկեղեցւոյանկախութիւնը, մի խօսքով հաղորդուած խորհուրդներէն ակներև էր թէ՛ ինչ հոգւով պէտք էր պատրաստուէր այն սահմանադրութեան ուրուագիրը, որով ոչ թէ կառավարելու էին Եկեղեցիքը, այլ հարկաւ կործանուելու էր նրա անկախութիւնը: Ահն այսպիսի հոգւով, այսպիսի ուղղութեամբ էր յղացած Յանձնաժողովը, որոյ անդամներն էին պապական ՀայՇահանջրպետը, պապականութենէ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծոցը նոր դարձած Սէրովրէ վարդապետը, Կօլլէժակի Ասեսօր Ռուս Օղկինը, և ցաւալի է ասել, մի Հայկազն կեներալ, որ յետբազմամեայ աշխատութեան, Ռուսաց և Հայոց եկեղեցիքն միաւորելոյ համար, մահազուշակ հիւանդութեան մէջ 1858 թրվին Յունուարի 7ին գրում էր իշխան Յովհաննէս Լազարեանցին, որ ստացաւ այս նամակը նմանապէս մերձ իման եղած ժամանակը թէ՛ «Տասնուչորս տարուայ Ներսէսի Կաթողիկոսութիւնը բոլորովին անօգուտ անցաւ Ռուսաց տէրութեան համար:» Յիշեալ Հայկազնը, կեներալ կնիազ Բէհրութովն էր: Յանձնաժողովը պատրաստեց սահմանադրութիւնը և նրա մէջ հաստատեց միգերագոյն վարչութիւն, որոյ իշխանութիւնը բարձրը էր քան Կաթողիկոսի իշխանութիւնը և որոյ իրաւունքին ենթարկուում էր Կաթողիկոսը: Պասկևիչը յուղարկեց այս սահմանադրութիւնը այն ժամանակուայ ներքին գործոց պաշտօնեայ Գրաֆ Բլուդովին: Սահմանադրութեան հոգին և ուղղութիւնը չափէն դուրս յարձակողական իրևեցաւ Պետերբուրգի դահլճին և այս պատճառով Կայսրը հրամայեց առանձին ժողով կազմել Պետերբուրգումը այս սահմանադրութիւնը նորէն ծրագրելու համար: Ժողովի անդամներն եղան Մինխատր Բոզնովն, Մինխատր Նեսելրօդն, Ասիական տէպարտամէնդի տիրէքթօր, Հայոց երդուած Թշնամին, Յոյն Ռօտօֆենամէնկինը և ժանդարմէրու պետ Գրաֆ Բէնկէնդօրֆը: Այս վերջինը ժողովի մէջ բերաւ մի առանձին գրութիւն, որոյ մէջ նրա կարծիքով սահմանադրութեան հոգին պէտք էր աւելի մարդասիրա-

կան լինէր, որն որ չէր կամենում Պասկևիչը, և այս գործի մէջ աւելի բռնաւոր յայտնուեցաւ, քան ինքն Նիկողայոս կայսրը: Այս տեղ մեր միտն է գալի Լուդովիկոս ՓՔի խօսքը որն որ ասաց Կոնստանդնուպոլսի համար, թէ՛ ils sont plus conservateurs que leur roi: Այս խօսքերը կարծես թէ կարող են համարուիլ մի խորհրդանշան բոլոր սարուկներու համար: Ահա այս պիտի ձեռներէ ստացաւ Հայաստանեայց սուրբ և առաքելական Եկեղեցին 1856 թուին իր վարչութիւնը, կամ լաւ ևս է ասել իր կործանման կարգադրութիւնը:

Սահմանադրութիւնը բաժանուում է 10 գլուխ կամ 141 յօդուած: Մենք քննութեան տակ կձգենք այն յօդուածները միայն, որոց մէջ աւելի ակներև է զլիաւոր նպատակը, այսինքն կործանումն մեր Եկեղեցւոյ անկախութեան և ինքնագոյութեան, թէ և հազիւ կգանուի այնպիսի յօդուած, որոյ մէջ չլինի գեթ կողմնակի ակնարկութիւն ընդդէմ Եկեղեցւոյ:

Քրիստոսի ուսման հետ միասին, Հայոց պատմութեան մէջ յայտնուում է մի նոր իշխանութիւն, որմէ յառաջ է գալի, կեանքի նոր սկզբունք. — Սկզբունք ախրոյ եւ ազատութեան: — Այդ իշխանութիւնը Կաթողիկոսի իշխանութիւնն է: Սա ծագել է Թադէոս և Բարդուղոմէոս առաքելոց և սուրբ Գրիգոր Լուսաւորչի չարչարանքէն, և ամբողջ հաւատարմութեամբ նրանց կեանքի սկզբունքներուն, նրանց դրօշի տակ, հազարամեայ ժամանակէ ի վեր շարունակում է արևելքում իր պատերազմը, հաւատոյ և խղճի ազատութեան համար: Կաթողիկոսը զինուորուած ամբողջ Հայոց ազգի երաշխաւորութեամբ, Աստուածային ուսման երկասյրի սրով, քրիստոնէութեան առաջին դարերէն սկսած երևում է թագաւորներու զահին մօտ իբրև պահապան և պաշտպան Հայոց ազգի հոգևոր և բարոյական օգտին: Այս իշխանութիւնը մինչև մեր օրերը պահպանել է իր ազգի ծագումը: Հայոց Կաթողիկոսը, ինչպէս նախնի դարերումը, ընտրուում է բոլոր ազգէն, ինչպէս որ ընտրուում էին ուրիշ ազգերու Պատրիարքներն ու Հռովմայ Պապերն էլ: Կա-

Թողիկոսի մէջ անձնաւորու մէ հողւորապէս ամբողջ ազգը, որոյ յանձնել է իր Եկեղեցւոյ վարչութիւնը և պատասխանատու է կացուցել Սատուծոյ և իր առաջը: 1836 Թուի Սահմանադրութիւնը, համաձայն նախնի կարգերու և կանոններու Հայաստանեայց եկեղեցւոյ, Բ. Գլուխ 10^ր յօդուածումը ասում է:

« Գլխաւոր կառավարչութիւն Եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց և ծայրագոյն վերատեսչութիւն Եկեղեցականաց նորին, ընդ նմին և ճիշդ պահպանութիւն կանոնաց և արարողութեանց այնր դաւանութեան՝ վերաբերի առ Պատրիարքն Էջմիածնի, իբրու առ գլխաւոր Կաթողիկոսն ազգին Հայոց. »

Այս խօսքերու մէջ ուղիղ և հասկանալի է Կաթողիկոսի իշխանութեան նշանակութիւնը, Հայոց ազգը պահպանել է այդ իշխանութիւնը դարաւոր խռովութեանց և յեղափոխութեանց մէջ, իբրև նշան իր իրաւանց, իր հաւատոյ և խղճի ազատութեան: Եկեղեցւոյ վարչական իշխանութեան միութիւնը նրա կարևոր և էական յատկութիւնն է, բայց ոչ պէսզի հողւոր, այսինքն, Կաթողիկոսի իշխանութիւնը իր օգուտն ազգի օգտէն չըջուի, ինչպէս տեսնում ենք այդ Արևմտեան երկիրներումը, Հռովմէական հողւորականներու մէջ, ազգն իր ընտրողական իրաւունքով հեռացնում է նրամէն այդ անպատեհ և թիւնը՝ որ կարող էր յառաջ գալ նրա սխլմունքէն ի վրաս Եկեղեցւոյ և ազգի, և Հայոց ազգը հին ժամանակներէն սկսած, ընտրելով հողւորականներու երբէմն և աշխարհականներու մէջէն մի արժանաւոր անձն այդ գերագոյն պարտաւորութեան համար, միշտ տալիս է նրան ամբողջ իրաւունք Եկեղեցւոյ վարչութեան, համաձայն Սւետարանի ուսման իր Եկեղեցւոյ աւանդութեանց և ազգի օգտին, և պատասխանատու է կանգնեցնում նրան, ինչպէս ասացինք, առաջի Սատուծոյ և ազգի:

Սահմանադրութեան 10^ր յօդուածի մէջ ընդունելով Կաթողիկոսին համաձայն նախնի օրինադրութեանց, Պետ եկեղեցականաց վարչութեան. Գ. Գլխումը 33^ր յօդուածի մէջ խորտակում է այդ իշխանութիւնը, հաստատելով նրա մօտ մի նոր

իշխանութիւն, անձանօթ Հայոց եկեղեցւոյ վարչութեան մէջ,
որ է Սինօղի իշխանութիւնը: Կարգադրութեան մէջ Սինօղը
յայտնուում է իբրև ընդդիմակաց և խանդավար, բաւ ևս է
ասել կործանիչ կաթողիկոսական պետութեան. Գ. Գլխումը 34^ր
յօդուածում, կարգադրութիւնը տալիս է Սինօղին ունի անդամ
« Ի չորից արքեպիսկոպոսաց կամ եպիսկոպոսաց՝ հանապազ
յԱթոռն էջմիածնի բնակելոց և ի նոյնաթիւ վարդապետաց: »

35^ր և 36^ր յօդուածներու մէջ Սինօղի իրաւասութեան և
տեսչութեան ստորադրում է հոգևոր իշխանութիւնը. իսկ 46^ր
յօդուածի մէջ ասած է, « Սիւնհոդոսն Առաւորչական Հայոց
էջմիածնի ներգործէ առհասարակ ըստ իրաւանց հանապազօր
անդամոց ի մի ատեան ժողովելոց (Գողչեկիսա): Չայն նորին
(Կաթողիկոսի) իբրև նախագահի ի զուգահաւասարագոյն ձայ
նից ունի զծանր կշիռ առաւելութեան: »

Հարցնում ենք այս ինչ Սինօղ է, ով է տուել նրան այդ իրաւ
ւունքը Եկեղեցւոյ վրայ, ազգն է տուել արդեօք, ոչ երբէք, ազ
գը միայն Կաթողիկոսն է ընտրում և միայն նրան է յանձնում
իւր Եկեղեցւոյ վարչութիւնը: Կաթողիկոսն ինքն է նշանակել,
ամենևին ոչ. որովհետև այդ կնշանակէր ընդդէմ իր իրաւանց
գործել և իր իշխանութիւնը կործանել: Ռուսաց կայսրն է տը
վել. բայց նա աւելի զեղեցիկ կը գործէր, եթէ իր ազգի մէջ
յայտնի իմաստուն առակի զօրութեամբ շարժէր, այսինքն ու
րիշի վանքը իր կարգադրութեամբ չմտնէր: Հայոց Կաթողի
կոսն ոչ թէ միայն ծանր գործերու մէջ, այլ փոքր ի շատէ զը
ժուարայոյժ բաներու մէջ էլ միշտ խորհրդակցութիւն էր անում
եպիսկոպոսներու և այլ եկեղեցական կամ աշխարհական ան
ձինքներու հետ, նայելով հանգամանքին թէ՛ որն խորհուրդ
ները կարևոր կլինէին նրան կամ օգտակար: Բայց այդ խոր
հուրդները պարտաւորական չէին նրա համար, որովհետև թէ
որ նա ինքն է պատասխանատու իր եկեղեցական հոգևոր վար
չութեան, ուրեմն ինքը պիտի ունենայ ըստ ճիշդ պահանջման
նախնի օրէնադրութեանց, և վճռական իրաւունք եկեղեցական

և հոգևոր գործերու վրայ: Այսպիսի իրաւանց վրայ հիմնուած լինելով, Կաթողիկոսը ժամանակ առ ժամանակ խորհրդակցութեան ժողով էր նշանակում, երբ հարկաւորութիւն էր զգում որ և է ձեռնտուութեան ծանր հանգամանքներու մէջ և այս ժողովները բաղկանում էին ոչ թէ ութ անդամներով, ինչպէս պահանջում է 1836 թուի սահմանադրութիւնը, այլ բազմաթիւ հոգևորական և աշխարհական ծերունիներով, այսինքն եպիսկոպոսներով, ազնուականներով և արհեստականներով և այլն: Այդպիսի դիպուածներումն ազգի ներկայացնողը խորհրդակցում էր իր ազգի հետ: — Պարտաւորութիւնը իրաւանց հետ—: Նոյն իսկ 10^ր յօդուածի շարայարութեան մէջ ասած է,

« Պատրիարքն յոչինչ դէպս չգօրէ անձին ումէք փոխանցել ի շխանութիւն իւր: » Այս յօդուածն ամենևին ընդդէմ է հոգևոր կանոնադրութեանց, որովք Կաթողիկոսն իրաւունք ունի եպիսկոպոսներու ձէջէն ընտրել մէկին իրան Տեղապահ, որ բոլոր ազգին յայտնի է լինում այս անունով, և Կաթողիկոսին որ և է պատճառով Էջմիածնէն բացակայութեան ժամանակ՝ վարում է նրա պաշտօնը:

Մի կարծէք թէ սահմանադրութեան բոլոր յօդուածները զրկողութիւն են հասուցանում Կաթողիկոսի իշխանութեանը, ոչ երբէք. զի ան 25^ր յօդուածը մի այնպիսի իրաւունք է տալի նրան, որոյ մասին ոչ միայն երբէք չէր մտածել ոչ մի Կաթողիկոս, այլ և մտածելն անգամ թուի թէ յանցանք պէտք էր որ համարուէր: Յիշեալ յօդուածը որպէս թէ կամելով վարձատրել Կաթողիկոսին նրա իրաւանց և իշխանութեան զրկողութեանց փոխարէն՝ տալիս է նրան մի չլսուած իրաւունք:

« Իբրև հրահանգ ունելով ինքեան զնախկին կանոնադրութիւնս Եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց և հասու լեալ յառաջագոյն կարծեաց սիւնհոդոսին Էջմիածնի այնր դաւանութեան Պատրիարքն որոշե վճռաբար զամենայն հոգևոր գործս՝ վերաբերեալս՝ ի դաւանութիւն հաւասոյ յԱստուածային պաշտմունս և ի սոցին նմանս: »

Իսկ 37^ա յօդուածի մէջ նոյն իրաւունքը տալիս է նմանապէս և Սինսօղին ասելով, « Սինսօղոսն Լուսաւորչական Հայոց կալով ընդ անմիջական տեսչութեամբ ծայրագոյն Պատրիարքին՝ աւարտաբար վճռե գաւեւայն գործս՝ վերաբերեալս առ վարդապետութիւնս հաւասոյ ի պաշտօնասարութիւնս Աստուածացիս, յԵկեղեցական արարողութիւնս և ի սոցին նմանս:»

Այս տեղ Կարգադրութեան յօրինողները բոլորովին ցնորքի մէջն են ընկել. Եկեղեցւոյ հաստատութեան սկիզբէն մինչև այժմ ոչ ինչ տեղ, ոչ մի ժամանակ, ոչ մի մարդէ տուուած չէ այսպիսի օրէնք, որ մի Պատրիարք ուժ եպիսկոպոսով, որոնց կարգադրութիւնը Սինսօղ է կոչում, համարձակուէր փոփոխել Եկեղեցւոյ դաւանութիւնը կամ արարողութիւնը: Եթէ մի այդպիսի անմիտ երևել է, Եկեղեցին արտաքսելէնրան, որպէս աղ, որ ըստ բանի Աւետարանին, կորուսել էր իւր համը և անպիտանացել էր կերակրի համար: Սահմանադրութեան յօրինողքը եթէ փոքր ի շատէ հասկացել էին Եկեղեցւոյ դաւանութեան վսեմութիւնը, պէտք էր յետ կենային այդպիսի օրէնք հրատարակելէն, որովհետև մինչդեռ օրէնքն է արդարութեան վրայ հիմնուում և ոչ արդարութիւնը օրէնքի վրայ, մեզ թուի թէ, երբէք այդպիսի օրէնքի հանդիպած չենք: Սահմանադրութիւնը կամենալով այդ անիրաւ օրէնքը հաստատել, որպէս թէ բանական հիման վրայ՝ անխղճաբար կոչում է այդ, Նախնի կանոնադրութիւնք Հայոց եկեղեցւոյ: Կատարեալ զբարարութիւն է այդ ինչպէս պատմութեան նոյնպէս և Եկեղեցւոյ դէմ: Ոչ ինչ կանոնադրութիւնք այդպիսի օրէնքի իրաւունք չեն տալիս Սահմանադրութեան հեղինակներուն: Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան մէջ միանգամ և եթ յայտնուում է մի անձն, որ հակառակ ազգի կամքին ինքնակամօրէն ձեռն մխեց Եկեղեցւոյ դաւանական փոփոխութեանց և նրա համար Հայոց ազգը ի նշան իւր արհամարհանաց այդպիսի օրինազանցութեան համար Կամոդիկոս Չզրիանուան զվսագիրքը մինչև այսօր զվսի վայր է դնում:

Պէտք է միտ բերել, որ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնը հաստատուած է Նիկիոյ համաշխարհական սուրբ ժողովի մէջ, ուր հաւարուած էին բոլոր քրիստոնէական եկեղեցիներու սուրբ Հարբը: Այս տեղ Հայք կանգ առին և վերջացուցին բոլոր աստուածաբանական վէճերը և այն օրէն սկսած մինչև այժմ, Աւետարանը ձեռին, կրկնում են այն ժողովքի հանգանակը և այնպէս կամին յայտնի ցոյց տալ թէ իրանց եկեղեցւոյ փարդապետութիւնը նոյնպէս հիմնուած է Աւետարանի վրայ և թէ նրանք միւս քրիստոնէայներու նման երկրպագում են հոգւով եւ ճշմարտաբեամբ ճշմարտին Աստուծոյ: Հայոց ազգը ի բնէ անտի օտար է մնում և անպտուղ կրօնական վէճերէն, իր ուղղափառութեան մասին պահպանելով Պօղոս առաքելոյն գեղեցիկ ուսումը. « Այսուհետև, որ միանգամ կատարեալքդ էք զայս խորհեցարուք և թէ այլ ազգինչ խորհիցիք, սակայն և զայն Աստուած ձեզ յայտնեսցէ: Բայց յոր ժամանեցարս զայն խորհել և ամին կանոնի միարան լինել: Առ Փիլիպ. Գլ. Գ. 15—16. առ Հռովմ. Գլ. Թ. 5.

Ոչ միայն Կաթողիկոսը կամ Էջմիածնի Սինօդը, այլ և ընդհանուր ազգի ժողովը չկարէ փոխել Եկեղեցւոյ դաւանութիւնը, որ հաստատուած է համաշխարհական ժողովով և կրնաքուած է անհամար վկաներու արիւնով: Եթէ բռնութիւն կը լինի Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեանը՝ նոյն ժամանակ նախնական ճշմարիտ եկեղեցին Հայաստանեայց կատարանորին, ինչպէս ասաց Ամբրոսիոսը Թէոդոս կայսեր, « Եթէ դու կմտնես աստուածային տաճարը, ես դուրս կգամ նրա մէջէն հանգերձ սրբութեամբ: » Կաթողիկոսի ընտրութեան մասին Սահմանադրութեան 11^ն յօդուածը, համաձայն Հայաստանեայց եկեղեցւոյ նախնական կանոնադրութեանց, ընդունում է բոլոր ազգի իրաւունքն ընտրութեան մասին:

« Ծայրագոյն Պատրիարքն Էջմիածնի ընտրեալ լինի ի համօրէն ազգէն Հայոց լուսաւորչական դաւանութեան: Իւրաքանչիւր վիճակ, զօրութեամբ 15^ն յօդուածոյն, ունի իրաւունս

երկուս քուէից և նշանակէ վասն ընտրութեան Պատրիարքին զերկուս անձնափոխանորդս զմի յեկեղեցականաց և զմիւս որ յաշխարհականաց: » Բայց 15^ն յողուածով « Հաղորդակից լինին ընտրութեան Պատրիարքին նաև համօրէն անդամք Սիւնհոդոսին Էջմիածնի և եօթանեքին երիցագոյն եպիսկոպոսք գտեալ յայնմ ժամանակի յԷջմիածին: »

Այսպիսի բաժանումն քուէներու Կաթողիկոսի ընտրութեան մասին, ոչ միայն ընդդէմ է նախնի կանոնադրութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայոց ազգի իրաւունքներուն, այլ և յայտնի հակառակութիւն է 11^ն յողուածին, որոյ զօրութեամբ « Մայրագոյն Պատրիարքն Էջմիածնի ընտրեալ լինի ի համօրէն ազգէն Հայոց լուսաւորչական դաւանութեան: »

Այդ ինչ մասնակցութիւն է բոլոր ազգի Կաթողիկոսի ընտրութեան մէջ. թէ որ վեց փճակները Ռուսաստանի, որոյ մէջ մինչ 500,000 անձինք կան 15^ն յողուածի զօրութեամբ պիտի ուղարկէ տասներկու պատգամաւոր միայն, և սրանցմէ վեց հոգևոր և վեց աշխարհական. իսկ Սինսողը հանդերձ Էջմիածնի միաբաններով ունի 15 քուէ: Այսպիսի բաժանումն քուէներու, մենք կհամարէինք անմիտ, եթէ չերևէր նրա մէջ մի գաղտնի խորհուրդ, որ է թուլացնել փոքր առ փոքր ազգի մասնակցութիւնը Կաթողիկոսի ընտրութեան մէջ և զօրացնել հոգևորականաց մասնակցութիւնը, որոնց վրայ սահմանադրութեան յօրինողները անտարակոյս կամենային ազդեցութիւն ունենալ ի ձեռն ոսկւոյ կամ պատուանշաններու Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութիւնը խանգարելու համար: Յիրաւի այդ բաժանումն քուէներու, որոյ մէջ հոգևորականաց իրաւունքը հզօրագոյն է քան ազգինը, այն նպատակը միայն ունի, որ ազգի իրաւունքը Կաթողիկոսի ընտրութեան նկատմամբ փոքր առ փոքր ոչնչացնէ և հոգևորականացն հաստատէ, ինչպէս եղաւ այդ Հռովմայ Պապերու ընտրութեան մէջ: Պապերը, ինչպէս և Պատրիարքները, սկզբումը ընտրուում էին ազգէն կամ ժողովրդէն. յետոյ այդ իրաւունքը անցաւ հո-

գեորականայ ձեռին և յետոյ էլ կարդինայներուն . իսկ վերջապէս Պապին սկսաւ ընտրել ո՛չ ազգը, ո՛չ ժողովուրդը և ո՛չ հոգեւորականաց դասը, այլ միայն Կոնկլաւը . կարդինայներուն փակուած ժողովը: Իսկ և իսկ կարգադրութիւնն այսպիսի նանապարհով գուր է փորում ազգային իրաւանց և Հայաստանեայց եկեղեցւոյ ինքնագոյութեան տակ: Կաթողիկոսի իշխանութիւնը արտաքոյ համազգովին ընտրութեան չունի կէնդանական ուժ և զօրութիւն իր հաստատութեան համար: Նա գուրկ է ազգի կարողութենէն, որով պիտի պատերազմի Եկեղեցւոյ անկախութեան և ինքնագոյութեան թշնամիներուն դէմ: « Ո՛վ որ ականջ ունի շեշու, քնդ շահ: »

17ⁿ յօդուածի մէջ ասած է . Կաթողիկոսն ընտրւում է քուէի առաւելութեամբ . « Համօրէն ներկայ հանդիսացեալք վերըստին ընտրեն ի չորից անտի զերկուս ոմանս արժանաւորս յԱթոռ ծայրագոյն պատրիարքութեան: »

Հարցնում ենք . ինչո՞ւ համար են երկու անձինք առաջարկվում բարձրագոյն հաստատութեան . եթէ քուէից առաւելութիւնը ցուցանում է որ մի անձն պիտի լինի Պատրիարք . գուցէ նրա համար դեռ ևս հնար լինի խարդախութեանց, և սրա ազդեցութեամբ հաստատուի նա, որ առաւել ձեռնտու է լինելու տէրութեան հպատակներուն Հայոց եկեղեցւոյ գերութեան նկատմամբ:

« Օգոստոսիսա կայսրն 19ⁿ յօդուածի զօրութեամբ, բաց որոշեալ զծայրագոյն պատրիարքն էջմիածնի, զԿաթողիկոսն Հայոց, հրամայէ, զկնի երդմնեցուցանելոյ զնա ի հաւատարմութիւն կայսերական զահին Ռուսաստանի՝ կատարել զձեռնադրութիւն նորին: »

Այդ երդումն աւելորդ է և անօգուտ, որովհետեւ Կաթողիկոսը իր օժման ժամանակ համբուրելով Խաչն ու Աւետարանը՝ երդնում է հաւատարիմ պաշտպան լինիլ իր Եկեղեցւոյն և նրա փարդապետութեանը: Թէ որ երդումն թագաւորի հաւատարցմութեան պարտաւորում է Կաթողիկոսին կատարել այնպիսի-

պահանջումներ, որոնք համաձայն են Աւետարանի և Եկեղեցւոյ վարդապետութեանը . ուրեմն այդ երդումն ինքն ինքեան անօգուտ է, որովհետև Կաթողիկոսը պարտաւոր է կատարել այդ ամէնը իր օժանն մէջ տուած երդման զօրութեամբ . իսկ եթէ կայսերական երդումը պահանջում է Կաթողիկոսէն այնպիսի բաներ, որոնք ընդդէմ են նրա Եկեղեցւոյն ուսման և ազգի օգտին, այդ երդումն ապօրինաւոր է և անօգուտ, որովհետև Կաթողիկոսը օժուելով երդուած է միշտ հաւատարիմ մնալ իր պարտաւորութեանց, իր եկեղեցւոյն և ազգին համար, որ նրա էական և անհրաժեշտ պարտաւորութիւն է, ըստ որում նա ներկայացնում է իր մէջ հոգևորապէս ազգը, որ նրան ընտրում է և իր եկեղեցւոյ և ազգային օգտի պահպանութիւնը և պաշտպանութիւնը նրան յանձնում է, պատասխանատու կացուցանելով նրան առաջի Աստուծոյ և ընդհանուր ազգիս Հայոց : Կրկնակի երդումը՝ որ տալիս է Կաթողիկոսը մի սխալ վիճակի մէջ է դնում իրան, պատճառ որ կայսրը իբրև մարդ ենթադրուած է կրքերու և մոլորութեանց, օրէնքը որ նրա կամքին նկարագիրն է, կարող է երբեմն նըկարգիր լինել և նրա մոլորութեանց, և այսպէս նա կարող է այնպիսի պահանջողութիւն ունենալ Կաթողիկոսէն, որոնք ընդդէմ են նրա խղճին և նրա Եկեղեցւոյն, ուրեմն և նրա երդման :

Անն մի բանի դիպուածներ, որոց մէջ այդ երկու երդումը միմեանցով են ընկնում :

Ա. 1844 թուին, այն ինչ Ներսէս Կաթողիկոսը պատրաստում էր ճանապարհ ընկնիլ Պետերբուրգէն դէպ ի Վրաստան, օտար դաւանութեանց Գէպարտամէնտի (տեսչութեան) դիրեկտոր Սկրիպիցինը եկաւ նրա մօտ և յանուն կայսեր առաջարկեց Հայոց եկեղեցւոյ միաւորութիւնը Ռուսաց եկեղեցւոյ հետ : Ով՞ չգիտէ, որ միահեծան Թագաւորի կամքը հաւասար է նրա պահանջմանը : Ներսէսը և ոչ մի վայրկեան մտածեց իր պատասխանոյ վրայ, նա զօրեղ խօսքերով մերկեց այն առաջարկութիւնը, որ մի հարուածով կամենում էր

կործանել Հայաստանեայց եկեղեցւոյ ինքնագոյութիւնը . այն որ կառուցուած էր Հայոց ազգի հազարամեայ ջարջարանաց հիման վրայ :

Բ . Իշխան Մէնջիկովն 1855 թուին , երբ Կոստանդնուպոլիս հասաւ , առաջարկեց փոխարքային անյապաղ ուղարկել նոյն մայրաքաղաքը մի եպիսկոպոս , որ ունենար կատարեալ իրաւունք Կաթողիկոսէն : Վորոնցովն այս մասին խնդրեց Կաթողիկոսէն , որ այն ժամանակ Տփիսիս էր և պատճառքերեց իբր թէ այդ եպիսկոպոսն պաշտպանելու էր այնտեղ Էջմիածնի աթոռի , չգիտենք ինչ օգուտը : Սրանից յետոյ երկու անգամ նոյն փոխարքայն ուղարկեց Ներսէսի մօտ իր (տիպլումատիկական քանցէլէրիայի) տիրէկոօր տէրութեան արտաքին գործոց դիւանապետ Լէյլին , որ ստիպում էր շուտով կատարել եպիսկոպոսի ուղարկումը : Ներսէս Կաթողիկոսը հասկանալով Նիկողայոս Թագաւորին Թագուն խորհրդները կրկին և կրկին դարձնում էր այդ Թախանձական պահանջումն , պատճառելով , թէ չունէր մի յաջողակ եպիսկոպոս յիշեալ յանձնարարութեան համար : Կաթողիկոսի այդպիսի ընթացքը դաւանանութիւն համարեց տէրութիւնը , բայց պատմութեան դատաստանը անշուշտ իրաւացի կհամարէ այս ընթացքը յանուն Եկեղեցւոյ , որ , չէ կարող և պէտք չէ հաղորդ լինել բռնաւորի աշխարհակալութեան նպատակներին՝ յանուն մարդկութեան՝ որոյ օգուտը օտար էր Նիկողայոսի բռնաւորական խորհուրդներէն . յանուն Հայոց ազգին՝ որոյ արիւնը հեղեղի պէս պէտք էր թափուէր , թէ որ Կաթողիկոսը մասնակից լինէր Ռուսաց կայսեր դեսպանին դաւանանութեանց , որովհետև այդ մասնակցութիւնը անպատճառ հետեանք էր ունենալու՝ մի ուրիշ մասնակցութիւն պատերազմի մէջ . որ պատրաստուում էր Ռուսաց , Օսմանցւոց և Եւրոպիոյ հետ և կորստաբեր էր լինելու երեք միլիոն Հայոց Օսմանեան տէրութեան :

Գ . 1857 թուին յունւարի 2 ին , փոխարքայ Բարիատինա-

կին հրաւիրեց Ներսէս կաթողիկոսին իր մօտ և մինչ տա-
յայտնուեցաւ՝ յանուն կայսեր առաջարկեց նրան ի ներկա-
յութեան Սարգիս եպիսկոպոսի Ջալալեանց սրբոյն Անդրէասի
պատուանշանը և վեց հազար ուրբի տարեկան թոշակ, այն
պայմանով, որ կաթողիկոսը կամաւորուի Հայաստանեայց
եկեղեցին միաւորել Ռուսացը հետ. Ներսէս կաթողիկոսը, որ
յառաջագոյն, այսինքն դեռևս օգոստոսի ամսումը ազդարա-
կան թուղթ էր ստացել Վորոնցովէն. « Թէ Բարխատինսկին մի-
բարձր յանձնարարութիւն ունի նրան անելու կայսեր կողմէն,
և որ ի հարկէ կաթողիկոսն ընդունելու է. » անխոյժ եղաւ
այս դիպուածի մէջ այն երդումէն՝ որնոր տուել էր Ռուսաց
տէրութեան հաւատարմութեան մասին և պատասխանեց Պօ-
ղոս առաքելոյ խօսքերով « Չեզ լսել առաւել քան Աստուծոյ
ընտրեցէք. » Գործ. Առաք. Գլ. Գ. 19. « Հնազանդիլ պարտ
է Աստուծոյ քան մարդկան. » Նոյն Գլ. Ե. 29.

Յիրաւի հնազանդիլ պէտք է Աստուծոյ և իր խղճի մտաց,
աւելացնում ենք և մենք, առաւել քան մարդկան: Այսպէս
էին Հայոց ազգի պատասխանները մինչ Յազկերտները կա-
մենում էին կործանել նրանց եկեղեցին: Այսպէս էր իւրաքան-
չիւր Հայու խորհրդական գրօշմը կամ սկզբունքը (ղրվիզը) կա-
թողիկոսէն սկսած մինչև մատաղահաս սերունդը, որոց Վար-
դաններն իրանց արեան հետ յանձնել են իբրև սրբութիւն՝
խղճամտանաց և եկեղեցւոյ ազատութիւնը: Բռնաւորը միշտ
կլսէ ամեն մէկէն պարտականութիւնը և խղճամտանաց ձայնը,
այսինքն « Հնազանդիլ պարտ է Աստուծոյ և իր խղճի մտաց,
առաւել քան մարդկան:

Սահմանադրութիւնը Սինօդ հաստատելուց յետոյ՝ անցնում
է վիճակաւոր առաջնորդներուն: Այն տեղ բռնաւորութիւնը
արդէն ազատօրէն է իւրացուցանում այն իրաւունքը, որ պատ-
կանում է Հայոց ազգի կաթողիկոսին ինչպէս և նրա պատաս-
խանատուութեանը առաջի Աստուծոյ և ազգի: « 57⁹ յօդուածի
գօրութեամբ՝ Թէմակալ առաջնորդը եկեղեցւոյ Լուսաւորչական

Հայոց ի Ռուսաստան՝ կարգին յօգոստոսփառ կայսերէ յեկեղեցական աստիճանաւորաց այնր դաւանութեան , որք հաստատին և արձակին բարձրագոյն հրովարտակօր : »

Իսկ 58ⁿ յօդուածի մէջ ասած է . « Արքեպիսկոպոսք Լուսաւորչական Հայոց ի Ռուսաստան լիակատար հոգևոր առաջնորդք այսր դաւանութեան ի թէման յանձն արարեալս նոցա բարձրագոյն հրամանաւ , և զկառավարութենէ իւրեանց տան պատասխանի ի բարձրագոյն կառավարութեան : »

Հարցնում ենք , մի՞թէ օրէնք է այս , կանոն է , ի՞նչ , այլ կոպիտ նիւթական ոյժ , մի՞թէ այսպիսի դէպ ի ներս յարձակումը կայսերական իշխանութեան Հայոց եկեղեցւոյ վարչութեան մէջ՝ Սահմանադրութեան յօրինողները զտել էին նախնի աւանդութեանց և օրէնադրութեանց մէջ :

45ⁿ յօդուածի զօրութեամբ . « ի Սիւնհոդոսի Լուսաւորչական Հայոց Էջմիածնի կարգեալ լինի առանձին հոգատար (պրօկուրօր) հաստատեալ ի կառավարիչ ի Սենատէն , » և որ 46ⁿ յօդուածի զօրութեամբ « վարի ի գործս իւր ընդհանուր կարգադրութեամբք , որք սահմանեալ կան յաղագս հոգատարական պաշտամանց : Նա պարտի ունել զմիօրինակ հսկողութիւն թէ զդատողական , թէ զբարեկարգական գործոց , որք մտանեն ի քննութիւն Սիւնհոդոսի : »

Սրամէն հետևում է , որ Սինսոդը կազմուած է Կամոդիկոսի իշխանութիւնը նուազեցնելու համար : Իսկ պրօկուրօրը երկուսի գործողութիւնքն էլ դիտելոյ համար : Սա է նմանապէս , որ պարտաւոր է ամսէնր մի անգամ կուսակալի միջնորդութեամբ տեղեկութիւն տալ ներքին գործոց պաշտօնէին , բոլոր այն բաներու մասին , որոնք խօսուում են , զրուում են և զործւում Էջմիածնի վանքի մէջ :

Այսպէս անս Սահմանադրութիւնը Սինսոդը կազմելով Եկեղեցւոյ էական յատկութեան զրկանք հասուցանելով և Կամոդիկոսի հոգևոր իշխանութեան միութիւնը խափանելով կործանեց և նրանց նիւթական կարողութիւնը : Միայնակեաց հոգևորա-

կանք հնուց հետէ այնպիսի անձինք էին, որոնք ըստ աւետարանական ճայնին թողած՝ իրանց ծնողքը, եղբարքը և ընտանիքը նուիրում էին իրանց Աստուծոյ սիրոյն: Այդպիսի սկզբունքը աշխարհի ու աշխարհային բաներու ուրացումեան այն հետեանքն ունէին, որ ուրիշ իրաւանց հետ միասին ոչնչացնում էին և ժառանգութեան իրաւունքը: Ժողովուրդը միայնակեաց հոգևորականներու ինչքն ու ստացուածքը համարելով սեփնականութիւն էջմիածնի կաթողիկոսական աթոռոյն միշտ առատութեամբ էր բաշխում նրանց իր տուրքը: Այսպիսի տուրքերը միւս ընծայաբերութեանց հետ միասին բաղկացնում էին էջմիածնական աթոռոյ նիւթական ոյժը՝ որ գործ էր ածում Կաթողիկոսը եկեղեցւոյ և ազգի կարօտութիւնքը և հարկաւորութիւնքը լցուցանելու համար: Սահմանադրութիւնն ընդունելով ժառանգներու իրաւունքը միայնակեաց հոգևորականներու ստացուածքին վրայ՝ զրկում է կաթողիկոսական Աթոռը այն մեծամեծ գումարներէն որ կարող էր նա ունենայ:

Սահմանադրութեան 71ⁿ յօդուածին մէջ ասած է: « Ի մեռանել թէմակալ առաջնորդին եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց՝ եթէ առանց կտակի մեռանիցի և ոչ ունիցի զօրինաւոր ժառանգս՝ սեփնական ստացուածք նորին՝ դառնան յօգուտ եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց այնր թէմի: »

Իսկ 91ⁿ յօդուածի մէջ այդ իրաւունքը ժառանգութեան տարածում է միայնակեաց հոգևորականներու բոլոր կարգի վրայ և նոյն ինքն Կաթողիկոսը չի բաց առնուում այդ օրէնքէն:

« Համայն շարժական ստացուածք մնացեալք զկնի մահուան կրօնաւորի սեփնականին վանուց նորին, եթէ ոչ թողուցու զկրտակ ինչ կամ չունիցի զօրինաւոր ժառանգս: »

Սահմանադրութիւնը վերոյիշեալ 71ⁿ և 91ⁿ յօդուածներով միայնակեաց հոգևորականներու մէջ զրգռում է զանազան ինքնասիրական կրքեր և ախտեր, մինչ նրանք աշխարհա ուրացել էին նրա համար, որ յաւիտեան խլեն իրանց մէջէն այդպիսի ախտերը, ընդունել ժառանգներու իրաւունքը, միայ-

նակեաց հոգևորականներու կայքին վրայ՝ նշանակում է Հայոց
Եկեղեցւոյ ստացուածքը յափշտակութեան ենթարկել : Յիշեալ
յօդուածներն ոչ միայն ներկայումս են գրկում եկեղեցին նրա
նիւթական կարողութենէն, այլ և ապագայումս էլ բոլորովին
ոչնչացնում են, որովհետև ժողովուրդը, տեսնելով որ իր տուր-
քը միայնակեաց հոգևորականներուն պիտի հասնի, ոչ թէ Էջմի-
ածնի Կաթողիկոսական աթոռոյն, համաձայն նախնի աւան-
դութեանց և օրէնադրութեանց, այլ վանականաց ժառանգնե-
ներուն, կասեցնում է իր ընծայաբերութեանց առատութիւնը,
որով ցամարում է նիւթական կարողութեան աղբիւրը . այս
ինքն ժողովրդեան եռանդը Եկեղեցւոյ նիւթական օգտի մասին :
Սահմանադրութիւնը նոյն յօդուածներում, Հայաստանեայց
Եկեղեցւոյ ստացուածքի մեծ մասը միայնկեացներու այսինքն
վարդապետներու և եպիսկոպոսներու ինքնասիրական կիրքե-
րուն թոյլ տալուց յետոյ՝ մնացած կարուածքը և դրամական
գումարները տալիս է տէրութեան ձեռքը : 15^{րդ} բաժանումը
35^{րդ} յօդուածի պարտաւորութիւն է համարում Սինօզին :

« Սահմանել զհարկաւոր մատեանս զհամօրէն ընչից վանօ-
րէից և եկեղեցեաց Հայոց ի սահմանս Ռուսաստանի եղելոց : »

Իսկ 16^{րդ} բաժանումը նոյն յօդուածի պարտաւորեցնում է Սի-
նօզին ամեն տարի տեղեկութիւն հասուցանել ներքին գոր-
ծոց պաշտօնէին յիշեալ ստացուածքի համար :

9^{րդ} յօդուածի զօրութեամբ Հայաստանեայց եկեղեցին չէ կա-
րող իրաւունք ստանալ անշարժ կայքի սեփականութեան վը-
րայ առանց հրաման ունենալու տէրութենէն : Յիշեալ յօդուա-
ծի մէջ ասած է : « Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց ի Ռու-
սաստան ունին իրաւունս ստանալոյ զանշարժ կարուածս .
բայց ոչ այլ ազգ կարեն ստանալ և օտարացուցանել զայնս եթէ
ոչ բարձրագոյն բարեհաճութեամբ աղերսամատոյց լինելով
զայմանէ ի ձեռն նախարարին ներքին գործոց սահմանադր-
եալ եղանակաւ : »

Հարցնում ենք, այդ ինչ իրաւունք է սեփականութեան

որով չէ կարելի ոչ գնել և ոչ վաճառել . յիրաւի այդ մի անլու-
ծանելի անհեղեղութիւն է : Կաթողիկոսի ձեռին ոչ մի դրամա-
կան գումար չթողնելու համար, որ գուցէ հարկաւոր դիպուած-
ներում գործածէ նա յօգուտ եկեղեցւոյ և ազգի: Սահմանադրու-
թիւնը մի հաճոյանման պատճառով պահանջում է Սինսօլէն
բոլոր դրամագլուխները, որոնք կարող էին ժողովել էջմիածնի
աթոռումը, տէրութեան յանձնել: Այս մասին ՏՂ^Յ յօդուածի
մէջ ասած է : « Փանձապետին է գործ զգուշանալ, զի մի յարկը
Սիւնհոգոսի մնասցին առանց ինչ հարկաւորութեան առաւել-
լագոյն գումարք դրամոց, և առաջարկել Սիւնհոգոսին Լուսա-
ւորչական Հայոց առ ի տնօրինել. զի զլուխք դրամոց առաւել-
ցին տոկոսեօք ըստ սահմանադրութեան օրինաց: Յանձնել մաս
նաւոր անձանց զգլուխս դրամոց՝ յայնժամ միայն թոյլ տուեալ
լինի, երբ Սիւնհոգոսն օգտակար համարեսցի զայն, և յանձն
արարեալ նովին եղանակաւ մասնաւոր անձին ումէք գումար
դրամոց մնայցէ յապահովի հաւաստի գրաւականօք : »

Գումարների յանձնարարութիւնը մասնաւոր անձանց, որ
կարգադրութիւնը թոյլ է տալիս « Սիւնհոգոսի հաւանութեամբ
և օրինաւոր գրաւով, » ամենևին անկարելի է և անգործադ-
րելի, պատճառ, որ Սինսօլը և պրօկուրօրը, որոնք տէրու-
թեան սնեղծուածք են, միշտ գործելու են համաձայն տէրու-
թեան հաճոյից և ինչպիսի և լինէին մասնաւոր անձանց գրաւ-
ները, սրանք միշտ կլինին անբաւական և գումարներու յանձ-
նարարութիւնը անօգտաւէտ է. ուստի և հետևաբար այդ
գումարները օրինաւոր կերպով շահեցնելու համար պիտի ու-
ղարկուին տէրութեան բանկը, ուր 119^Պ յօդուածի զօրու-
թեամբ ուղարկուելու են բոլոր վիճակաց գումարները, նոյն
կերպով շահեցնելու համար : 119^Պ յօդուածումն ասում է :
Գլուխք դրամոց եկեղեցեայց՝ առ ի շահել զտոկոսիս տուեալ
լինին ի կայսերական կամ ի ժողովրդական գանձարանս :

Բայց կարելի է արդեօք այդ գումարները կրկին դուրս բերել
բանկին. Սահմանադրութիւնն այս մասին լռում է. հաւանական

է որ յիշեալ գումարները մնան տէրութեան ձեռքումը մինչ ի յաւիտեան, ինչպէս և նրանց թուագիրը Կաթողիկոսի ձեռքումը, նմանապէս մինչ ի յաւիտեան :

Այժմ պիտի հարցնենք, մի՞թէ այդ տահմանադրութեամբ, որոյ միջոցով այսքան ընդդիմադրութիւնք կան նախնի օրէնադրութեանց և ազգային իրաւանց 1836 թուէն մինչև այսօր վարում է Հայաստանեայց Եկեղեցին : Մենք կպատասխանենք՝ այո՛, վարում է, բայց թէ ինչպէս յետագայ պարագայքը ցոյց կտան :

Փառք Յովհաննէս կաթողիկոսին (Կարբեցի) որ երբ յիշեալ տահմանադրութիւնը ստացաւ Երևանու նահանգական կառավարիչ իշխան Բէհրութեանցէն և ընթերցաւ ծայրէ ի ծայր, վեր կացաւ իր տեղէն, առաւ վեղարը գլխէն և գետին զարկաւ, ասելով « Եթէ իմացած լինէի այդպիսի կարգադրութիւն լինելը մինչև իմ օծումը, անշուշտ յանձնառու չէի լինել ամենայն Հայոց ազգի Կաթողիկոսութիւնը » : Բէհրութեանցը շիտթուած Կաթողիկոսի սրտմտութենէն՝ սկսաւ խաղաղացնել նրան հաւատացնելով թէ նա կարող է վարել Հայոց Եկեղեցին համաձայն նախնի օրէնադրութեանց, միայն թէ թողնէ Սահմանադրութիւնը մնալ ինչպէս որ է : Հազիւ հազ այս խօսքերէն հանգստացաւ փոքր ինչ բարկացած Կաթողիկոսը, բայց աւանդ այն խօսքերու մէջ չկար նշմարտութիւն : Այս տեղեկութիւնքը մենք ստացել ենք Դաւիթ Սուրէնեացնէն, որ ականատես է եղել յիշեալ անցքին :

Ներսէս կաթողիկոսի պատրիարքական զահը բազմելէն յետոյ՝ ներքին գործոց պաշտօնեայ Գրաֆ Պէրովսկին թղթակցութեամբ յայտնեց նրան՝ թէ Վեհափառ կայսրը ցանկանում է Սահմանադրութիւնը նորոգել համաձայն նախնի օրէնադրութեանց Հայաստանեայց եկեղեցւոյն. Ներսէսը մասնաւոր ժողով նշանակեց Տիխիսում և նրան յանձնեց սահմանադրութեան փոփոխութիւնը, ժողովը բաղկանում էր ինն և կամ տասի չափ երկչոտ կամ կարծատես աստիճանաւորներէ, որոնք

կամ բաւական համարձակութիւն չունենայով և կամ չհասկանալով հին Սահմանադրութեան թշնամական հոգին և ուղղութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ . յօրինեցին մի նոր Սահմանադրութիւն, որոյ բովանդակութիւնը հազիւ էր զանազանում հինէն: Կաթողիկոսը ստացաւ յանձնաժողովէն այդ Սահմանադրութիւնը և խոստացաւ քննել և ուղղել, բայց թողեց առանց ուշադրութեան, որովհետեւ ամենևին անբաւական էր նրանով:

Հայաստանեայց եկեղեցւոյ վարչութեան Սահմանադրութիւնը մասնաւոր անձանց գործ չէ, այլ բոլոր Հայոց ազգի գործն է, նրան յօրինողը պէտք է լինի ազգը իր երեսփոխաններու ձեռքով, նրա բովանդակութիւնը և նրա նպատակը, մեր կարծիքով . զխաւորապէս պիտի լինին յետագայ նիւթերը:

Ա. Հայոց ազգի իրաւանց ճիշտ և միակ պահպանութիւնը Կաթողիկոսի ընտրութեան մէջ:

Բ. Կաթողիկոսական իշխանութեան միութիւնը եկեղեցւոյ վարչութեան մէջ իբրև էական տարր այդ իշխանութեան:

Գ. Կաթողիկոսի պատասխանատուութիւնը ազգի առջև, որոյ ներկայացնողն է նա:

Դ. Հայաստանեայց եկեղեցւոյ ինքնագոյութիւնը և անկախութիւնը իբրև պայման Sin quasi non առանց որոյ չիք:

Արդարութիւնը, նոյն իսկ և Ռուսաց տէրութեան օգուտը պահանջում են, որ յիշեալ Սահմանադրութիւնը բոլորովին զեղծուի, որովհետեւ իր յայտնութեան օրէն սաստիկ տրտունջ բարձրացուց, ինչպէս Հնդկաստանու հայոց կողմէն, որոնք իրանց անբաւականութիւնը նոյն ժամանակ յայտնեցին զրով Ռուսաց դեսպանին Լոնդոնումը: Նոյնպէս Օսմանեան տէրութեան և Ռուսաց տէրութեան տակն եղող Հայոց կողմէն, որք այդ սահմանադրութեանը նայում են իբրև մի թշնամական բանի Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութեան և իրանց ազգայնութեան դէմ: Ժամ է արդէն ի բաց թողնել այդ կորուստարէր ձգտումը դէպի կրօնական միակերպութիւնը, որ

այնքան վեաս հասուց քրիստոնէութեանն ու մարդկութեանը : ժամ է արդէն Ռուսիոյ տէրութեան հասկանալ թէ առանց խղճի և կրօնի ազատութեան չկրնայ ոչ ուղիղ կրօն և ոչ քրիստոսաբարոզ եկեղեցի, և թէ այն՝ որ կոչում են ուղղափառութիւն՝ միութիւն չէ, այլ միակերպութիւն, որ ճնշում է խղճի ազատութիւնը, միայն այն պատճառով՝ որ բոլոր լեզուներէն և Աստուծոյ երկրպագուներէն կազմէ մի լեզու և մի եկեղեցի : Ահաւասիկ տասնուհինգ դար է արդէն, որ ամենահզօր և շատ հնարագէտ զորձակայներ խորտակուում են միակերպութեան կորստաբեր սխտեմայեան : Իսկ Ռուսաց տէրութիւնը դեռ ևս անմտութեամբ հետևում է այդ մահառիթ սկզբունքին : ժամ է արդէն թոյլ տալ Աստուծոյն Աստուծոյ, թոյլ տալ Հայոց՝ ազատութիւն խղճի և կրօնի : — Ազատութիւն երկիրպագել Աստուծոյ ըստ գեղեցիկ բանի առաքելոյն Պօղոսի : « Իւրաքանչիւր ոք զիւր միտս հանեսցէ : » Այդ ազատութիւնը խնդրում ենք մենք և մեր քրիստոնէայ եղբարց Վրացւոց համար էլ, որոց տարի է ի վեր, արգիւտւած է իրանց լեզուով աղօթել եկեղեցիների մէջ : Այդ ազատութիւնը խնդրում ենք մենք և մեր ըստ մարդկութեան եղբարց մահմետականաց համար, որոնք այլև այլ պատճառներով հալածուում են իբրև անհաւատ : ժամ է թոյլ տալ Աստուծոյն Աստուծոյ, քակել ուղղափառական նորոգութեան ընկերութիւնը Կովկասումը, որոյ գաղտնի նախառակը ոչ ոքի համար արդէն գաղտնի չէ, ոչ յայսկոյս և ոչ յայնկոյս Կովկասու : Այն միտքը՝ թէ կարելի է տմարդի ուժով հաստատել կրօնական միութիւն՝ անխոհեմ և անհեղեղ է : Բռնութեամբ առնել այն որ Աստուած յատկացրել է միայն ազատ համոզմանց՝ նշանակում է գերադասել արտաքին միութիւնը ներքնոյն, որ միայն հանելի է Աստուծոյն, այդ նշանակում է խնդրել ուղղափառ եկեղեցի, այլ ոչ Քրիստոսի կրօնը : Ստորկացունել խիղճը ահով, յափշտակել նրան պատիր յոյսերով ու խաբեբայութեամբ՝ նշանակում է ուղղակի թշնամանել Աս-

տուժոյն, որ այդ խիղճը տնկել է մեր սրտումը և որուն պատկանում է իշխանութիւն այդ խղճի վրայ: Մի մարդու կամ մի ժողովրդեան այնպիսի դրութեան հասուցանել, որ նա պարտաւորուած լինի կամ իր նիւթական օգուտէն հրաժարուիլ և կամ իր հաւատը, խղճի ազատութիւնը, ուրանայ՝ սրբապղծական ձեռնարկութիւն է: Յիշեալ ընկերութիւնը ուղղափառական նորոգութեան՝ Կովկասու մեջ արդէն սկսել է ցոյց տալ իր կորստաբեր հետեանքը ինչպէս ժողովրդեան վրայ այնպէս էլ տէրութեան վրայ:

Արևելեան և արևմտեան Տաղիստանի մահմէտական բնակիչները նոյնպէս և Նուխուայ, Բօրչալուի և այլ տեղերի մահմէտականք սկսան զունդ զունդ Ռուսաց սահմանէն դուրս ելանել դէպի Օսմանեան կամ Պարսից տէրութիւն: Կովկասու ամայութիւնը դրան է հասած, եթէ այդ ընկերութիւնը կշարունակէ իր կրօնական հալածանքը և կըքշէ ժողովրդեան իրանց երկրէն յանուն Աստուծոյ, որ ինչպէս մեր Փրկիչը ասել է «Ոչ թէ զոհ է խնդրում, այլ ողորմութիւն:»



ԿԱՐԳ ԵՒ ԿԱՆՈՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

*Որևոր առաջարկուած և Մասրեսու Կարողիկոսէն 1865 թուին
Ռուսիոյ տերութեանը.*

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԷՆ ՀԱՆԱԾ

ԳԼՈՒԽ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՐ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Հայաստանեայց Սուրբ և Առաքելական Եկեղեցին ընդունելով Աւետարանի լոյսը սուրբ Թաղևոս և սուրբ Բարդուղիմէոս առաքեալներէն և առաքելահաւատար սուրբ Գրիգոր Լուսաորչէն, խոստովանում է Տէր Յիսուս Քրիստոսին իրան զլուխ:

Նա հիմնած է սուրբ Մարգարէներուն և Առաքեալներուն զրուած ջներու վրայ, դաւանում է Նիկիոյ ժողովոյն հաւատոյ հանգանակը և ընդունում է միայն երեք առաջին Ընդհանրական սուրբ ժողովները:

Բ.

Ծայրագոյն հողևոր Տէրն ու Հովիւը Հայաստանեայց Եկեղեցւոյ է Կաթողիկոսն ամենայն Հայոց:

Գ.

Կաթողիկոսը՝ լմնչալէս բոլոր Հայոց աղգէն ընտրուած անձն՝ ունի լիակատար իշխանութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ վարչութեան վրայ:

Գ.

Վաթողիկոսն Հայաստանեայց Եկեղեցւոյ նախնի կարգերուն
ու կանոններուն համաձայն ընտրուած է ամենայն երկրում
գտնուող Հայոց ազգէն :

Այս ընտրութիւնը շինուած է յետագայ կերպով

Ե.

Հայաստանեայց Եկեղեցւոյ Վաթողիկոսի մահուանէ յետոյ՝
Վաթողիկոսի Տեղապահը Վաթողիկոսական խորհրդին հետ խոր-
հուրդ անելէն յետոյ՝ ուղարկում է վիճակային վարչութեանց
ձեռքով ազդարարական Թուղթ ամեն երկիրներ, ուրտեղ գրա-
նուում են Հայք և նշանակում է մի տարի ժամանակ նոր Վաթո-
ղիկոսի ընտրութեան համար :

Զ.

Վաթողիկոսի մահուան լուրը տարածուելէն յետոյ՝ Հայաս-
տանեայց Սուրբ Եկեղեցւոյ ժողովուրդն իրաւունք ունի քաղաք-
ներումն ու գիւղերումն ընտրել պատգամաւորներ, առանց զա-
նազանելու նրանց ծնունդը, վիճակը և կոչումը, որոնք կարող
են լինել, ինչպէս աշխարհական, նոյնպէս և հոգևորական :

Է.

Գիւղերու կամ գիւղաքաղաքներու պատգամաւորները պէտք
է ժողովուրին իրանց գործակալներու բնակած քաղաքը, ամեն
գործակալի վիճակէն երկու պատգամաւոր ընտրելու համար 7
առանց զանազանելու նրանց ծնունդը, վիճակն ու կոչումը 7
որոնք պէտք է գնան իրանց վիճակաւոր առաջնորդի նստած
տեղը, որտեղ պէտք է լինի վիճակաւոր պատգամաւորներու
ընտրութիւնը :

Ը.

Հայոց ամեն վիճակաւոր առաջնորդի բնակած տեղի եկեղե-
ցիներն իրաւունք ունին առանց զանազանելու ծնունդը, վիճա-
կըն ու կոչումը, ամեն եկեղեցի առանձին՝ ընտրել երեք պատ-
գամաւորներ, որոնք գործակալական Թէմէն ընտրուած պատ-

զսամաւորներու հետ՝ ընտրում են մի սրատգամաւոր առաջնորդական վիճակէն. նա կտրող է լինի, ինչպէս աշխարհական՝ նոյնպէս և եկեղեցական կոչումէ: Էջմիածնի միտրանութիւնն էլ իրաւունք ունի ընտրել իր մէջէն եօթը սրատգամաւոր Աստուղիկոս ընտրելու համար:

Թ.

Առաջնորդական վիճակէն սրատգամաւորներ ընտրելու հետ էլ մի և նոյն ժամանակ ընտրում են նրանց փոխանորդներ հարկաւոր եղած ժամանակ նրանց տեղը բռնելու համար:

Ժ.

Եթէ գիւղական սրատգամաւորները նշանակուած ժամանակին բոլորը չգան իրանց գործակալի բնակութեան տեղը, գործակալական սրատգամաւորներու ընտրութիւնը կկատարուի ներկայ գտնուող սրատգամաւորներով: Այս մի և նոյն կարգն էլ կը պահպանուի եթէ գործակալական սրատգամաւորները լիովին ժողովուած չլինին վիճակաւոր առաջնորդներու բնակութեան տեղը:

ԺԱ.

Եթէ առաջնորդական վիճակէն ընտրուած սրատգամաւորները չգան նշանակուած ժամանակին Էջմիածին, այն ժամանակ Աստուղիկոսի ընտրութիւնը կատարուում է ներկայ գտնուած առաջնորդական վիճակներէն եկած սրատգամաւորներով. եթէ ներկայ գտնուող սրատգամաւորները միաձայն հաճութեամբ կամենան սպասել սրատգամաւորներու լիակատար ժողովքին՝ նրանք իրաւունք ունին ժամանակն երկարացնել, ինչպէս որ իրանք կը կամենան, Աստուղիկոսի ընտրութեան համար:

ԺԲ.

Ընտրութիւնը լինում է Էջմիածնի վանքումը պահպանելով իսկութեամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգն ու կանոնը, ձէսն ու արարողութիւնը:

ԺԳ.

Իւրաքանչիւր առաջնորդական վիճակի սրատգամաւոր ընտ-

բումեան սկզբումը առաջարկում է իր (կանախառն) ընտրելոյն բոլոր պատգամաւորներու ներկայութեանը՝ հետագայ կերպով: Նա փոփոխած արկիւղ (քուէտուփ) մէջն է ձգում իր ոլորած տոմսակը, որոյ վրայ գրուած է լինում այն ընտրելոյն անունը, ազգը, կոչումը և բնակութեան տեղը, որուն նա արժանաւոր է կարծում Աւթողիկոսութեան:

ԺԳ.

Տեղապահը, ինչպէս նախագահ պատգամաւորներու ժողովոյն, բաց է անում արկղը, որու մէջն են պատգամաւորներու տոմսակները և դուրս հանած տոմսակները բարձր ձայնով կարդում է. յետոյ ընտրելի անունները գրում են մի բարձր տեղ, որ ամեն պատգամաւոր կարող լինի կարդալ. իսկ բաց արած տոմսակները դնուում են սեղանի վրայ պատգամաւորներու առջև:

ԺԵ.

Բարաբանչիւր պատգամաւոր գրում է նշանակուած ընտրելիներու թուէն չորս ընտրելոյ անուն ուրիշ տոմսակի վրայ և ոլորելով ձգում է արկղի մէջ: Ամեն տոմսակ կարդալիս տեղապահը գրում է ընտրուած ընտրելիներուն անունները. հաշուում է նրանց ստացած ձայներու որքանութիւնը և ամենուն անունը, նոյնպէս ըստ բազմութեան ձայնի այն չորս ընտրելիներուն անունները գրում են բարձր տեղ, ու վ որ շատ ձայն է ստանում, ընտրուում է Աւթողիկոս Ամենայն Հայոց, իսկ եթէ ձայները հաւասար են դուրս գալի, Աւթողիկոսի ընտրութիւնը վրձնուում է վիճակ ձգելով:


ԺԶ.

Այս ընտրութիւնը վերջանալուց յետոյ ամեն երկրի պատգամաւոր յայտնում է իր վիճակաւոր առաջնորդին և իրան տէրութեանը՝ թէ ո՞վ արժանացաւ ամենայն Հայոց Աւթողիկոսական Քահին:

ԺԷ.

Ընտրուած անձը, իր Սկեզեցւոյ կարգերուն ու կանոններուն համաձայն երդուելէն յետոյ, որ Սահաբանական ուսմանը և

Հայաստանեայց Եկեղեցւոյն հաւատարիմ լինի, օծուում է
Վաթողիկոս Ամենայն Հայոց, ըստ նախնի կարգաց և կանոնաց
Հայաստանեայց Եկեղեցւոյ:



ՔԼՈՒԽ Բ.

Անեւայն Հայոց Կաթողիկոսի իրաւունքն ու պարտքը .

Ա.

Վաթողիկոսն է յաջորդ Սրբոյն Քրիզոստի Լուսաւորչի Էջմիած-
նի Վաթողիկոսական Գահի վրայ:

Բ.

Վաթողիկոսի մշտական բնակութեան տեղն է ըստ սովորութեան
Հայոց՝ Էջմիածնի վանքը:

Գ.

Վաթողիկոսի Տիտղոսն է ի հետեց գործածուած Կաթողիկոս
Անեւայն Հայոց:

Դ.

Համաձայն նախնի սովորութեանց՝ Վաթողիկոսը բաղարներէն,
իր Վաթողիկոսարանէն, Էջմիածնի վանքէն ելանելու և մտա-
նելու ժամանակ իրաւունք ունի ուղևորիլ ամենայն փառքով և
պատուով իր ազգի կողմէն:

Ե.

Հայաստանեայց Եկեղեցւոյ սլաշտամանց մէջ Վաթողիկոսի
անունը յիշատակուում է ըստ կանոնաց Եկեղեցւոյ:

Զ.

Համաձայն նախնական օրինաց Հայաստանեայց Եկեղեցւոյ
միմիայն Վաթողիկոսն ունի իրաւունք միւսոն օրհնել բոլոր
Հայոց Եկեղեցիաց համար:

է.

Վաթողիկոսն՝ ինչպէս գլխաւոր Տէր և Հովիւ Հայաստանեայց
Սկեզեցոյ, միմիայն ինքն ունի իրաւունք օծել առաքինի և
օգտակար հոգևորականներէն Նախկուպոս :

Ը.

Վաթողիկոսը միմիայն ունի իրաւունք վարձատրել արժանա-
ւոր հոգևորականներուն ըստ նախնի սովորութեան Հայաստա-
նեայց Սկեզեցոյ :

Թ.

Վաթողիկոսն իր հոգևորականներուն ուրիշ աշխարհքներ ու-
ղարկելու ժամանակ, որ տեղ Հայոց ազգ կայ բնակուած,
պէտք է վարուի համաձայն այն աշխարհներու օրէնքներուն :

Ժ.

Վաթողիկոսն՝ ինչպէս ընդհանուր Հովիւ Հայոց ազգին, իրաւ-
ունք ունի ի ձեռն ազգային հոգևոր ուսումնարանաց տարածել
գլխութեան լոյսն իր ազգայնոց մէջ :

ԺԱ.

Վաթողիկոսը, իբրև ընդհանուր Հովիւ Հայոց ազգի, Ներսէս
Շնորհաւոյ նման ուղարկում է ժամանակ առ ժամանակ Ընդ-
հանրական Թղթեր հանդերձ օրհնութեամբ ամենայն աշխարհ-
ներումը գտնուող Հայոց ազգին, յորդորելով նրանց մնալ խա-
ղաղ և առաքինի վարքով և հնազանդ օրինաւոր իշխանութեանց՝
համաձայն բանին սրբոյ Աւետարանի :

ԺԲ.

Որ Թագաւորի իշխանութեան տակ, որ գտնուում է Հայոց
ազգը՝ նոյն Թագաւորի Պահակալութեան ժամանակ Վաթողիկոսն
ուղարկում է նրան շնորհաւորութեան կոնդակ :

ԺԳ.

Ինչ գործի և դիպուածի մէջ, որ պահանջում է այն Տէրու-
թեան հրամանը, որտեղ բնակուում են Հայք, Վաթողիկոսը
պէտք է վարուի այն Տէրութեան օրէնքներուն համաձայն :

ԺԳ.

Վաթողիկոսը նշանակում է Վաթողիկոսական խորհրդին ծառայողներ, որքան որ հարկաւոր է, այն Հայոցմէ որոնք իմանում են այն Տէրութեանց օրէնքն ու լեզուն, որոնց սահմանումը գտնուում է Հայոց ազգէն, որպէս զի Վաթողիկոսական խորհուրդը կարող լինի համաձայնել իր գործողութիւնքը նոյն Տէրութեանց օրէնքի հետ:

ԺԵ.

Վաթողիկոսին, ինչպէս իր ընտրելոյն, յանձնում է Հայոց ազգը պաշտպանել անմատչելի իր Յկեղեցւոյ Վարդապետութիւնը և իր Հաւատոյ Քլիսաւոր մասերու պաշտամունքը:

ԺԶ.

Հաւատոյ Քլիսաւոր մասունքը, որոնք որ Հայաստանեայց Յկեղեցին զաւանում է Ճշմարիտ, Սուրբ, Առաքելական, ոչ մի գատողութեանց ներքոյ չեն կարող ըկնիլ, ինչպէս Վաթողիկոսի, այնպէս էլ բոլոր եպիսկոպոսներու ժողովոյն:

ԺԷ.

Ինչպէս ամենայն Հայոց Վաթողիկոսը, նոյնպէս և բոլոր եկեղեցականք սարտական են անխախտ և անքակտելի պահպանել Հայաստանեայց Յկեղեցւոյ Վարդապետութիւնն ու Հաւատոյ Քլիսաւոր մասունքը: Նրանց իշխանութիւնը հիմնուած է իրանց Յկեղեցւոյ պաշտպանութեան և հաւատարմութեան վրայ, որով երգում են բոլոր եկեղեցականք իրանց հոգևորականութեան կարգն առնելու ժամանակ:

ԺԸ.

ՆՍ է Հաւատոյ մասանց և Հայաստանեայց Յկեղեցւոյ պաշտամանց անխախտ պահպանութիւնն է Վաթողիկոսի և բոլոր Հայոց եկեղեցականաց զլիսաւոր սարտաւորութիւնը, ուրեմն նրանց ամենազլիսաւոր պարտքն է՝ այս Վսեմ և Սուրբ նպատակին յարմար միջոցներն ի գործ դնել:

ԺԹ.

Հայոց ազգի Կաթողիկոսին է պատկանում Հայաստանեայց
Եկեղեցւոյ զլխաւոր վարչութիւնը և եկեղեցականաց ու Եկեղեց-
ւոյ կարգերն ու կանոնները, ծէսերն ու արարողութիւնքը
հշտութեամբ կատարելու վրայ զլխաւոր վերահայեցողութիւնը:

Ի.

Կաթողիկոսն իր Եկեղեցւոյ նախնի կարգերուն ու կանոննե-
րուն համաձայն ընտրում է Հայաստանեայց Եկեղեցւոյ վար-
չութեան համար,

Ա. Տեղապահ .

Բ. Կաթողիկոսական խորհուրդ .

Գ. Վիճակաւոր առաջնորդներ, որոնք իրանց մօտ խոր-
հուրդներ կունենան :

ԻԱ.

Սակնայն Հայոց Կաթողիկոսը, իբրև անմիշտպէս Քահանա-
յապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ, իրաւունք ունի արձակել,
փոխել Կաթողիկոսական խորհրդոյն անդամներին, վիճակաւոր
առաջնորդներին իրանց պաշտօնէն, նայելով իր Եկեղեցւոյ
օգտին և յարգելով Հայոց ազգի կամքը: Աաղադրութիւն և հա-
մակցութիւն են անհրաժեշտ պայմանք ժողովրդեան և նրա հո-
գևոր հովիւներու մէջ:



ԳԼՈՒԽ Գ.

Տեղապահի եւ Կարողիկոսական խորհրդոյ պատրաստութիւնը .

Ա.

Վաթողիկոսն ընտրում է իրան Տեղապահ այն եպիսկոպոսներէն մէկին, որ յարգ և պատիւ ունի Հայոց ազգի և Աթոռի անջն:

Բ.

Վաթողիկոսի Տեղապահը գործակից է լինում Վաթողիկոսին ամեն բանումը, ինչպէս կառավարելումն՝ այնպէս էլ ուրիշ գործերումը :

Գ.

Վաթողիկոսի Տեղապահը Վաթողիկոսի Էջմիածնայ Աթոռէն բացահայտութեան ժամանակ, կամ թէ նրամահուանէ յետոյ մինչև նոր Վաթողիկոսի ընտրութիւնը՝ Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեանց համաձայն կառավարում է Վաթողիկոսական Գահը :

Դ.

Հայաստանեայց եկեղեցւոյ Հոգևոր գործոց զլխաւոր կառավարութեանց Վաթողիկոսական խորհուրդը բաղկանում է ութ մշտական անդամներէ, որոնք նշանակուած են Վաթողիկոսէն Հայաստանեայց եկեղեցին կառավարելու համար :

Ե.

Վաթողիկոսական խորհուրդն ունի խորհրդական ձայն . նրա գործողութեանցը սրատկանում են՝ ըստ վարչական և դատատանական մասին ,

Ա. Վերահայեցողութիւն ամեն տեղերու և ծառայող անձանց գործողութեանցը վրայ . որոնք Էջմիածնայ Աթոռի իշխանութեան ներքոյ են :

Բ. Վերահայեցողութիւն Աթոռոյ կառավարութեան ներքեւ եղած վանքերու, եկեղեցիներու և ազգային հոգևոր ուսումնարաններու բարեկարգութեանց վրայ :

Գ. Նախանկատողութիւն Վանքեր, Նկեղեցիներ և Ազգային հոգևոր դպրեվանքեր կամ վարժարաններ հաստատելու:

Գ. Իրաւունք ունի վճռել, ինչպէս հոգևորականութեան և վարդապետութեան մէջ ընդունելու, այնպէս էլ կարգընկեցանելու վարդապետութենէ և առ հասարակ քահանայական կարգէն վճռով Վաթողիկոսին:

Ե. Առանձին առանձին ցուցակագրութիւն կազմել բոլոր եկեղեցիներու, վանքերու, դպրեվանքերու, ազգային ուսումնարաններու, ըստ ամենայն վիճակաց:

Զ. Օտար դաւանութենէ Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցը մտնողներու գործերը տեսնելու, համաձայն օրինաց իւրաքանչիւր տէրութեան, որոյ իշխանութեան ներքև գտնուում են Հայք:

Է. Պատրաստել վկայականներ ծնելոց, մկրտելոց՝ պսակելոց և ննջեցելոց՝ այն տէրութեանց պահանջման ժամանակ, որոնց իշխանութեան տակ գտնուում են Հայք: Մի խօսքով ամեն գործ ինչ որ լինում է վիճակային խորհուրդներումը և առաջարկուում է յանուն Վաթողիկոսի, ինչպէս են բողոքները, զանգատները, պսակներու աշխարհական իշխանութեանց չենթարկուելը, եկեղեցական պաշտօնէից յանցանքները, հոգևորականաց միմեանց հետ ունեցած անբաւականութիւնքը և այլն և այլն: Իսկ Վաթողիկոսական խորհրդոյն անդամներու, վիճակաւոր առաջնորդներու և վիճակային խորհրդներու վրայ եղած զանգատները ուղարկուում են յանուն Վաթողիկոսի:

Զ.

Վաթողիկոսական խորհուրդը բոլոր իր քննութիւնքը և կարծիքն ամենայն գործոց վրայ առանց ինչ բացառութեան ներկայացնում է Վաթողիկոսի բարեհաճութեանը:

Է.

Վաթողիկոսան ինչպէս անմիջական Հայրապետ Հայաստանեայց Նկեղեցւոյ, տնօրինում է ամենայն գործ իր բարեհաճ կամաց համաձայն, պահպանելով իր Նկեղեցւոյ և Ազգի մեծ օգուտները ի վերայ հիմանց նախնի կարգաց և կանոնաց Հայաստանեայց եկեղեցւոյ:

ԳԼՈՒԽ Գ.

Իրաւունք եւ պարտք վիճակաւոր առաջնորդաց եւ վիճակա-
յիւն խորհրդոց Հայաստանեայց եկեղեցւոյ :

Ա.

Աստուծոյ յառաջնորդաց նշանակում է առաքինի եւ օգտակար Նախկո-
պոսներէն վիճակաւոր առաջնորդ, ընդունելով ի յարգանս եւ
ազգի կարծիքը նրանց նշանակելու ժամանակ, նա յայտնում է
վիճակաւոր առաջնորդներու համար այն Տէրութեանց, որտեղ
նրանց ուղարկում է առաջնորդ :

Բ.

Հայաստանեայց եկեղեցւոյ առաջնորդը, Էրբոր նշանակուե-
ցաւ այն պաշտօնին եւ գնաց իրան նշանակուած վիճակը՝ պար-
տաւոր է վարուիլ հաւատարմութեամբ այն Տէրութեանը, որտեղ
է նրա վիճակը :

Գ.

Հայոց վիճակաւոր առաջնորդը պարտաւոր է ցոյց տալ իրան
անձովը օրինակ բարեպաշտութեան եւ ամեն քրիստոնէական
եւ քաղաքական բարեգործութեանց, աշխատիլ ամեն իրամէն
կախուած միջոցներով իրան յանձնուած հոգևոր հօտի բարոյա-
կան կեանքին համար :

Դ.

Նա պէտք է արթնութեամբ հսկէ իրան վիճակի բոլոր հոգե-
ւորական գործերու վրայ, շարժելով հոգևորականութիւնը դէ-
պի առաքինութիւն համաձայն ուսման սուրբ Աւետարանին :

Ե.

Հայոց վիճակաւոր առաջնորդը պարտաւոր է, որքան կարող
է, աշխատիլ տարածել սուրբ Աւետարանի վարդապետութիւնը,
բարոյականութիւնը եւ սուրբ Քրոյց ընթերցանութիւնը, որնոր
զլխաւոր ազբիւրն է ճշմարիտ բարոյականութեան, ի գործ դնե-
լով այս բանիս համար քրիստոնէական ճշմարիտ հոգւոյն հա-

մածայն՝ հեզ միջոցներ ուսուցանելոյ և համոզելոյ : Նա պէտք է այն ժամանակ հեռանայ այն բանէն, որնոր հեզութեան և մարդասիրութեան ընդդէմ է :

2.

Վիճակաւոր առաջնորդն իր վիճակն այց ելանելու ժամանակ, առանձին մտադրութիւն է դարձնում եկեղեցականաց վրայ, վանքերու, եկեղեցիներու, դպրեւանքերու վրայ, վերջացնելով այն տեղերումը պատահած անկարգութիւնքը և աշխատելով ճանապարհ գտնելու, որ խաղառ վերջանան այդպիսի անկարգութիւնքը :

3.

Վիճակաւոր առաջնորդն առանձին ուշադրութիւն է անում իր վիճակի վանքերու, և եկեղեցիներու մօտ գտնուած ուսումնարաններու վրայ, աշխատելով ազդէն ընտրուած անձանց հետ միասին բարւոքել այն ուսումնարաններու վիճակը և տարածել յուսատրութիւն :

Ը.

Վիճակաւոր առաջնորդներու մօտ հաստատուում են վիճակային խորհուրդ որ բաղկանում են երեք մշտական անդամներով, այնպիսի Հայոցմէ, որոնք գիտեն ինչպէս իրանց ազգային օրէնքն ու լեզուն՝ նոյնպէս և այն Տէրութեանը, որու սահմաններումը գտնուում է նրանց վիճակը : Այս անդամոց նշանակելը և արձակելը կախուած է վիճակաւոր առաջնորդէն :

Թ.

Վիճակային խորհուրդը գործակից է լինում վիճակաւոր առաջնորդին իր վիճակի հոգևոր գործերու կառավարութեանց մէջ. վիճակային խորհուրդին գործողութեանցն է պատկանում.

Ա. Անմիջական վերահայեցողութիւն իրան իշխանութեան ներքեւ եղած եկեղեցւոյ պաշտօնէից վրայ, ինչպէս բնիանայից, նոյնպէս և վարդապետաց և վանականաց :

Բ. Հոգատարութիւն և բարեկարգութիւն իր վիճակումը զրտնուած ազգային հոգևոր ուսումնարանաց, վանօրէից և եկեղեցեաց վրայ :

Ժ.

Վիճակաւոր առաջնորդն իր մօտ նշանակում է մի յաջորդ , որ գործակից է լինում իրան վիճակը կառավարելու ժամանակ . իսկ նրա բացակայութեան ժամանակ և մահուանէ յետոյ կառավարում է առ ժամանակ վիճակաւոր առաջնորդի տեղը :

ԺԱ.

Վիճակաւոր առաջնորդն իր կայարանէն դուրս՝ հոգևոր գործերը կառավարելու համար՝ նշանակում է գործակալներ . իսկ վիճակի արդիւնքը և միւս տնտեսական գործերը նա կառավարում է ազգէն ընտրուած անձանց հետ միասին . բոլոր վիճակի արդիւնքը նա ուղարկում է այնտեղ՝ որտեղն որ նշանակուած է :

ԺԲ.

Վիճակաւոր առաջնորդը , ինչպէս Հայոց ազգի հոգևոր հովիւ , իրաւունք ունի ազգային հոգևոր ուսումնարաններու ձեռքով , ազգէն ընտրուած անձանց հետ միասին տարածել գիտութեան լոյսը իր ազգին մէջ :

ԺԳ.

Հայաստանեայց եկեղեցւոյ վիճակաւոր առաջնորդը պարտաւոր է ամեն տարւոյ վերջին ներկայացնել Վաթողիկոսին լիակատար և մանրամասն հաշիւ իր ամեն գործողութեանց համար իրան յանձնուած վիճակումը :

ԺԴ.

Հայոց վիճակաւոր առաջնորդը , վիճակային խորհրդները և բոլոր Հայաստանեայց եկեղեցւոյ հոգևորականք էն ամենայն Հայոց Վաթողիկոսի անպայման հնազանդութեան ներքե և պատասխանատու էն նրա առաջին , ինչպէս Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետի առաջին , որուն ազգը հաւատացել է իր Եկեղեցւոյ ազատութիւնը և անկախութիւնը , ինչպէս իր ընտրելոյն որ պատասխանատու է Աստուծոյ և Հայոց ազգի առաջ :

ԳԼՈՒԽ Ե.

Հայոց հոգեւորականաց եւ սրբազնագործ պաշտօնեից
արդեանց համար :

Ա.

Հայաստանեայց եկեղեցին բաժանուում է կրօնաւորութիւն և
քահանայութիւն : Կրօնաւորներն են, Կաթողիկոսը, Եպիսկոպոս-
ները, վարդապետները, արեղայները և ուրիշ միանձն միաբան-
ները : Քահանայութեան են պատկանում սրբազնագործ պաշ-
տօնեայքն, աւագ քահանայքն, քահանայքը, աւագ սարկաւազ-
ները և Եկեղեցւոյ միւս սպասաւորքը :

Բ.

Հայոց վանքերն անմիջապէս կախում ունին վիճակաւոր ա-
ռաջնորդներէն և պարտաւոր են իւրաքանչիւր տարուայ վեր-
ջին տալ լիակատար հաշիւ իրանց ամէն գործողութեանց հա-
մար : Վանահարց վրայ եղած զանգատը արուում է տեղական վի-
ճակաւոր առաջնորդին :

Գ.

Հայոց վանքերումը բացի վարդապետներէն և տիրացուներէն
կամ մայրապետներէն, կարող են բնակուիլ վիճակաւոր առաջ-
նորդի հրամանովը արականաց վանքերումը ծերացած և անօգ-
նական սրբազնագործ պաշտօնեայք, այն տեղ սպրեւու և հանգ-
չելու համար : Իսկ կանանց վանքերումը անօգնական այրի
կանայք հոգևոր կոչումէն, և զառամած պառաւունք :

Դ.

Հայոց վանքերը կառավարում են՝ արականացը վանահարք,
վարդապետները և արեղաները. իսկ կանանցը՝ մայրապետները.
ինչպէս նրանց նոյնպէս և սրանց կարգում է վիճակաւոր
առաջնորդը Կաթողիկոսի հաստատութեամբ :

Ե.

Վանահարքը կամ մայրապետքը վանքերը կառավարում են
վանքական խորհրդին գործակցութեամբը, որ կազմուում է վա-

նահարց կամ մայրապետաց նախագահութեամբքը երկու ծագ-
րագոյն արժանաւոր վարդապետներէն կամ մայրապետներէն,
որոնց հաստատում է վիճակաւոր առաջնորդը վանահարց և
մայրապետաց առաջարկութեամբքը:

Զ.

Վանահարք և մայրապետք վանքական խորհրդի հետ հսկում
են իրանց միաբանաց վրայ և եկեղեցական կանոնաց ու վան-
քական կարգաց խսկութեամբ կատարուելուն վրայ:

Է.

Հայաստանեայց եկեղեցւոյ քահանայից պարտաւորութիւնն
է կատարել եկեղեցիներումը սրբազնագործութիւն և լցուցանել
ժողովրդեան հոգևոր պիտոյքը:

Ը.

Հայաստանեայց եկեղեցւոյ քահանայքը կախումն ունին վի-
ճակաւոր առաջնորդներէն, իսկ եկեղեցւոյ սպասաւորներն
աւագ քահանաներէն կամ երէցներէն, բոլոր սրբազնագործ
պաշտօնէից և եկեղեցւոյ սպասաւորաց վրայ եղած զտնգաստ-
ները տրվում են վիճակաւոր առաջնորդներուն:

Թ.

Հայաստանեայց եկեղեցւոյ սրբազնագործ պաշտօնեայքը և
եկեղեցւոյ սպասաւորքը կառավարուում են իրանց արդիւնքնե-
րով: Սրբազնագործ պաշտօնէից և եկեղեցւոյ արդիւնքը երկու
տեսակ են, Ա. Այն տուրքերն որ ստացուում են ժողովրդեան
հարկը կատարելիս, Բ. Յօժարակամ նուիրատուութիւնքը:

Ժ.

Հոգևոր հարկերէն եկած տուրքերը պէտք է նշանակեն ժո-
ղովրդէն ընտրուած երեսփոխանները, եկեղեցւոյանաց և աւագ
քահանայից հետ միասին, որոնք ընտրուում են այս բանիս հա-
մար: Հոգևորականքը խոստովանութեան և հաղորդութեան ժա-
մանակ Հայաստանեայց եկեղեցւոյ օրէնքներուն համաձայն
տուրք պէտք չէ որ պահանջեն: Պէտք է յիշեն նրանք Ներսէս
Շնորհարոյ զեղեցիկ խօսքերը « Մի ոք ի ձէնք, զրում է նա,

առ քահանայս գրած թղթին մէջ, ըստ հարկի սրահանջեացէ
զինս արժանոյ անգին շնորհին, վասն մկրտութեան կամ մահու
հաղորդ տալոյ, այլ որ ունին և տան սիրով որպէս զնուէր եկե-
ղեցւոյ առէք և որ աղքատ լինին մի բռնադատէք: » Յիսուս Քր-
րիստոս, գրում է նա միևնոյն թղթի մէջ, « ետ ձեզ զկոչումն
անուան խրոյ և յանձն արար ընդ անուանն և զգործն խր հովուել
զժողովուրդ խր, ուսուցանել միշտ զգործս քարիս և տալ
զանձն օրինակ քարեաց ամենեցուն: »

ԺԱ.

Հայոց եկեղեցւոյ կալուածք են, Ա. Վանքական և եկեղեցական
շինուած քները և նրանց մէջն եղած շարժական կայքը. Բ. հողեր,
Գ. Գումար գրամոյց. Դ. Հասքեր և տուրքեր յօգուտ եկեղեցեաց
և վանօրէից. Ե. Կալուածք որ մնացել են Վանթոյիկոսի, վիճա-
կաւոր առաջնորդաց և բոլոր միանձն հոգևորականաց մահուա-
նէն յետոյ, որ ըստ կանոնաց Հայոց եկեղեցւոյ ոչ ոք իրաւունք
չունի ժառանգել քաց ի եկեղեցիէն:

ԺԲ.

Երեւոյթիսանքը ժողովրդեան սրտգամաւորներու հետ միա-
սին սրարտաւոր են մանրամասն ցուցակ կազմել բոլոր յանձ-
նուած եկեղեցական կալուածոց, մայր գումարաց, արդեանց,
մտից և յօժարակամ նուիրատուութեանց համար. նրանք պէտք
է ունենան ժառանգիւնեալ մատեաններ իրանց ժողովրդեան կըն-
քով կնքած և գրեն նրանց մէջ գրամական ելքն ու մուտքը:

ԺԳ.

Հայոց ժողովուրդը քաղաքներումը, զխղերումը ընտրում է
իր մէջն եղած քարեպաշտ մարդիկներէն մի քանի երեւոյթիսան
և մի քանի սրտգամաւոր (ըստ Տանկաստանի Հայոց սահմա-
նադրութեան Թաղականներ) իր եկեղեցւոյ արդիւնքը և կալուած-
քը կառավարելու համար:

ԺԴ.

Հայաստանեայց եկեղեցւոյ երեւոյթիսանքը կամ սրտգամա-
ւորքը կառավարում են եկեղեցւոյ բոլոր տնօրէսական մասերը.

Նրանք իրատեք ունին առաջարկել իրանց ժողովրդեանք և վիճակաւոր առաջնորդին առաջարկութիւններ, ազգային հոգևոր ուսումնարաններ, որբերու և ազքատներու համար շինութեաներ հիմնելու համար. նոյնպէս օգտակար առաջարկութիւններ խնայպէս եկեղեցական կալուածոց կառավարութեան մասին, նոյնպէս և ժողովրդոց և հոգևոր հովուաց մասին :

ԺԵ.

Հայաստանեայց եկեղեցւոյ Երեսփոխանքն ու պատգամաւորքը իւրաքանչիւր տարւոյ վերջին պարտաւոր են հրաւիրել իրանց ժողովուրդը և առաջարկել նրանց իրանց յանձնուած Եկեղեցւոյ լիակատար և մանրամասն հաշիւները, իրանց բոլոր գործողութեանց համար և մանաւանդ Եկեղեցւոյ գումարներուն համար :

ԺԶ.

Հայաստանեայց եկեղեցւոյ Երեսփոխանքն ու պատգամաւորքը կարող են ժողովրդեան կամքով շատ տարիներ կրկին ընարուիլ. Հայոց ժողովուրդը նայելով Եկեղեցւոյ օգտին կարող է փոխել նրանց ամեն ժամանակ :

ԺԷ.

Հայաստանեայց եկեղեցւոյ կայքի, մայր գումարէն, արդիւնքի, մուտքի և յօժարակամ նուիրատուութենի տմբողջ և կանոնաւոր գործողութեան մասին անպայման պատասխանատու են նախ Երեսփոխանքն ու պատգամաւորքը, յետոյ նրանց ընարող ժողովուրդն իրանց բոլոր կալուածներովը :



ԳԼՈՒԽ Զ.

Հայաստանեայց Եկեղեցւոյ Ռուսաստանի ձեռք ունեցած ընդհանուր իրաւանց եւ արտօնութեանց հասեալ :

Ա.

Հայաստանեայց Եկեղեցին Ռուսաց կայսրութեան մէջ՝ հաւասար միւս օտար դաւանութեանց՝ է թագաւոր կայսեր ամեն-սղորմած հովանաւորութեան ներքե :

Բ.

Բոլոր Ռուսաց կայսրութեան մէջ թոյլ է տուում ազատ պահպանութիւն կրօնի ըստ ծիսի Հայաստանեայց Եկեղեցւոյ, այն պայմանով, որ այս Եկեղեցւոյ անդամներն ի վերայ հիմանց ընդհանուր օրինաց տէրութեան մեծապէս յարգանք ունենան առ ամենայն ուրիշ հաւատս, որոնք ազատօրէն դաւանում են Ռուսաստանումը. մանաւանդ զգուշանան բռնի օտար հաւատէ փոխել մէկուն իրանց հաւատին, ինչպէս խստութեամբ արգիւտած է այս տէրութեան օրէնքով :

Գ.

Հայոց Եկեղեցական պաշտամունքը կատարելը և հոգևոր գործերը կառավարելը պատկանում է Հայոց հոգևորականներուն, համաձայն կարգի ու կանոնի Հայաստանեայց Եկեղեցւոյ : Հայոց Եկեղեցւոյ հոգևորականք ամեն գործերու մէջ ինչ որ իրանց պարտաւորութիւնն է, մանաւանդ հոգևոր գործերու մէջ, են Աստուծոյ իրաւանց ներքե և կախումն ունին նրամէն :

Դ.

Հայաստանեայց Եկեղեցւոյ քահանայներուն և կրօնաւորներուն հոգևոր գործերը դատում և վճռում են հոգևոր կառավարիչները. իսկ երբոր հոգևորականք կռիւ կամ ուրիշ քաղաքական վէճ ունենան իրար հետ և այնպիսի անձինքներու հետ, որոնք հոգևորական կարգէն չեն, նոյնպէս և քրեական գործերումը և այլ այսպիսի բաներումը, նրանք ենթարկուում են աշխարհական դատաստանի ըստ օրինաց, նշանակելով մի

առանձին պատգամաւոր հոգևորական կողմէն, որ ներկայ գտնուելու է դատելու ժամանակ :

Ե.

Հայոց քահանաները և կրօնաւորները Ռուսաստանումը ազատ են ամեն տուրք վճարելուց և տեղի հարկէն :

Զ.

Առ հասարակ միանձուռքը Հայոց եկեղեցւոյ և սրբազնագործ պաշտօնեայք, նոյնպէս կանայք, որդիք և այրիք քահանայից ոչինչ կերպով չեն ենթարկուիլ մարմնական պատժոյ :

Է.

Հայոց հոգևորականները Թէ միանձուռք և Թէ քահանայք հաւասար բոլոր հպատակներուն նորին կայսերական մեծութեան, իրաւունք ունին ստանալ պարգևներ ամենոզորմած կայսրէն իրանց ջերմեռանդ ծառայութեան և հաւատարմութեան համար :

Ը.

Հայոց եկեղեցիներն ու վանքերը և նրանց մօտն եղած եկեղեցական շինուածքները, նոյնպէս և կալուածքները, որբանոցներն ու աղքատանոցները, Թէև վարձով էլ տուած լինին և արդիւնք էլ բերեն, ամեն տեղ ազատ են տան հարկէն, քաղաքային ծախքէն և ամեն տեսակ վճարելիքներէն բացի փողոցի քարելուցն ու մաքրելուցը և լապտեր վառելուցը :

Թ.

Էջմիածնի կամ անոռապատկան հինգ զիւղերը, Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Չայդայթատու և Եղուարդ ազատ են այսուհետև մինչև ապագայ նկատողութիւնը ամեն արդուական հարկէն և գեանի ծախքէն. այս պայմանով միայն որ Էջմիածնի վանքն էլ իր կողմէն չձանրաբեռնէ նրանց նոր նոր հարկերով և բաւական լինի այն տուրքով և ծառայութեամբ ինչպէս մինչև յունիսի 5. 1856 տալիս էին տէրութեանը և Էջմիածնի վանքին :

Ժ.

Հայոց եկեղեցւոյ վէճերը կը վճռուին դատարաններումն այն օրէնքով որով վճռում են արքունական վէճերը, դատարաններն էրբոր նրանց գործերը վճռելու լինին, հրաւիրում են հոգևոր կողմէն պատգամաւորներ ըստ օրինաց, որպէս զի ներկայ լինին, զիմելով այս մասին այն հոգևոր կառավարութեանց տր որ հարկն է :

ԺԱ.

Էջմիածնապատկան զիւղերու վէճերը նրանց կալուածներու մասին (յօդ 85) և նոյն զիւղացւոց գանգատները ենթարկում են աշխարհական դատաստանի :

ԺԲ.

Յայսկոյս Աովհասու կողմը Հայոց եկեղեցւոյ երեսօխաններու տները ազատ են տնական հարկէն :

ԺԳ.

Հայոց եկեղեցւոյ երեսօխանները, որոնք բաւականին շատացրել են եկեղեցւոյ գումարը, կամ թէ բաւական ժամանակ (տաս տարի ըստ Ռուսական օրինաց) երեսօխանութեան պաշտօնն են կատարել ամենայն հաւատարմութիւն և բաւականութիւն ցոյց տալով իրանց հոգևոր կառավարողներուն, իրաւունք ունին վարձատրութեան առաջակիցիլ համաձայն օրինաց :



ՅԱԻԵԼՈՒԱԾ

1

Էջմիածնի բոլոր կալուածներու համար աշխարհականներէ կազմուած մի մասնաժողով կազմուի Ելևմտական տեսչութեան պաշտօնը կատարելու համար :

2

Նոյնպէս ամէն վիճակաւոր առաջնորդներու մօտն էլ աշխարհականներէն մի մասնաժողով կամ խորհուրդ Եկեղեցական և վանքական կալուածներու Ելից և մտից տեսչութեան պաշտօնը կատարելու համար :

3

Սուրբ Էջմիածնի Վանժողիկոսական ամուսի պիատոյքը, նոյնպէս առանձին հոգևոր գործերու համար ծառայող Եկեղեցականաց պիատոյքը, հոգացուի ամբողջ ազգէն օրինաւոր միջոցներով :

4

Ուսումնական խորհուրդ, ինչպէս ամենայն հայոց Վանժողիկոսի մօտ, նոյնպէս և ամէն վիճակաւոր առաջնորդներու մօտ հաստատուի, Հայոց մանկանց դաստիարակութեան և այլ ուսումնական և գիտնական աշխատութեանց համար :

5

Իսպառ վերացնել փոքրաւորութիւն և տիրացութիւն կոչուած սպասաւորութիւնը . ոչ մի Եպիսկոպոս վարդապետ կամ քահանայ իրրև իրան առանձին սպասաւոր չծառայեցնէ Եկեղեցւոյ ուխտէն մի պաշտօնեայ, ինչպէս Էն Ռուսաստանումը տիրացու ասուած և Թուրքաստանումը փոքրաւոր ասուած մի կարգ Եկեղեցական ասումէ զուրկ մարդիկը :

6

Մի աշխարհական որ Եկեղեցական լինելու կոչում ունի, իր սողոսյին և Եկեղեցական ուսումը ժողովրդական ուսումնարան

ներումն աւարտելուց յետոյ՝ Թէ որ կրօնաւոր է կամե՞նում լինել պէտք է , որ մտնէ մի դպրեւանք , Թէ որ քահանայ կամ սարկաւազ է լինելու , աստիճան և կարգ կարող է ստանալ առաջնորդ եպիսկոպոսէն մի և նոյն ժամանակ պահպանուելով իրան ընտրող ժողովրդէն :

7

Թէպէտ՝ այս կարգ ու կանոնի մէջ Աթոռիկոսական ընտրութեան տեղն ու անոռը Էջմիածինն է նշանակուած , բայց ըստ պահանջման հարկին և կամաց սղգին , ընտրութեան և անոռի տեղը կարող են փոխադրուիլ , ինչպէս և նախնի դարերումը . օրինակի համար Աթոռիկոսի ընտրութիւնը կարող է լինել և Պօլիս և Աթոռ Յօշափանքումը (հոռոմոց վանք կոչւածը) որ սահմանազրուի է Ռուսիոյ և Օսմանեան պետութեանց :



